

№ 56 №

Պրոլետարներ բոլոր լեհերների, միացե՛ք.

Լ. ԱԶԱՏՅԱՆ

== Խ. Ս. Հ. ՄԻՈՒԹՅԱՆ ==

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՅԵՎ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ



«Հայգուղկոտալ»-ի հրատարակություն № 4.

ՅԵՐԵՎԱՆ

1926

3 JUL 2017

Պալատարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

4. ԱԶԱՏՅԱՆ

Խ. Ս. Հ. ՄԻՈՒԹՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՅԵՎ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻՅՆ



«ՀԱՅԳՅՈՒՂԿՈՈՊ» Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ № 4

ՅԵՐԵՎԱՆ

1926

1. ՄԵՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆ
2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ
ՎՐԱՅՈՎ ԴԵՊԻ ՍՈՑԻԱԼԻԶՄ

Շարված է «Լինոտիպով»



11-240659P

ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Դրանուկ. 407 բ.

Պատվեր 2767

Տիրաժ 2000

ՄԵՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆ*)

1.

Խորհրդային իշխանության առաջ ծառացած հիմնական խնդիրը սոցիալիզմի շենքի կառուցումն է, իսկ սոցիալիստական տնտեսությունն և սոցիալիստական հասարակարգը կազմակերպելու ամենակարևոր նախադրյալն արտադրողական ուժերի զարգացման մի վերոշ բարձր աստիճանն է։ Ահա ինչու ԽՍՀ Միության տնտեսական վերելքը Խորհրդային իշխանության ամենազլխավոր հոգսը և նրա աշխատանքի առանցքն է կազմում։ Արտադրողական ուժերի աճման ճանապարհով է միայն, վոր Խորհրդային իշխանությունը կարող է իր տնտեսական և կուլտուրական շինարարությունն առաջ տանել և այն սոցիալիստական հողի վրա դնել։ Բանվորի և աշխատավոր դյուղացու իշխանությունից պահանջվում է վոչ միայն տնտեսությունը բարձրացնել, այլ և այնպես բարձրացնել, վոր այդ ասպարիզում տարած ամեն մի հաղթություն սոցիալիստական հաղթություն լինի, սոցիալիզմի շենքի կառուցմանը նպաստի, այդ շենքի աղյուսները դնի։ Այս նպատակի իրականացմանն և ծառայում նոր տնտեսական քաղաքականությունը, վորն իր ամբողջ էությունով սոցիալիստական քաղաքականություն, սոցիալիզմին ձգտող քաղաքականությունն է։

Միայն 1921 թվից է, վոր Խորհրդային իշխանությունը պլանայափ շինարար աշխատանք կատարելու հնարավորությունն է ստանում։ Խորհրդային բոլոր հանրապետություններն այդ ժամանակ տնտեսապես կործանված էյին։ Սմեն ինչ հարկավոր եր նորից սկսել, հիմքից վերականգնել։ Բավական է ասել, վոր 1920—21 տնտեսական տարում, 1913 թվականի դրության հետ համեմատած, դործարանային արդյունաբերությունն ընկել էր

*) Արտատպված է «Խորհրդային Հայաստան» թերթից։

վեց անգամ (16 տոկոս) : Տնտեսական փլուզումի պայմաններում, չորս կողմից բուրժուական յերկրներով շրջապատված և առանց վորեն ոգնության դրսից, իր տրամադրության տակ չնչին միջոցներ ունենալով, հինգ տարվա ընթացքում խորհրդային իշխանությունը հաջողեցնում է վերականգնել յերկրի տնտեսությունը : Ըստ համաժխութենական Պետպլանի տվյալների, ԽՍՀ Միության տնտեսական աճումը հետևյալ պատկերն ունի (նախապատերազմյան գներով հաշված) .

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

(Միլիարդ ռուբլի)

1913 թ.	— 12,8	— 100 տոկոս
1924—25 թ.	— 9,15	— 71,5 »
1925—26 թ.	— 11,4	— 89 »

ԱՐԴՅՈՒՆԱՅԵՐՈՒԹՅՈՒՆ

(Միլիարդ ռուբլի)

1913 թ.	— 5,620	— 100 տոկոս
1920—21 թ.	— 0,899	— 16 »
1923—24 թ.	— 2,635	— 46 »
1924—25 թ.	— 3,934	— 70 »
1925—26 թ.	— 5,283	— 94 »

ՏՆԱՅՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

(Միլիարդ ռուբլի)

1913 թ.	— 1,39	— 100 տոկոս
1924—25 թ.	— 1,05	— 75,5 »
1925—26 թ.	— 1,37	— 98 »

1925—26 տնտեսական տարում խորհրդային Միությունը 1913 թվի արտադրության 91 տոկոսն է ունենալու : Մեր տնտեսական առաջնադարձյալն այս աստիճանն ըստ արժանվույն գնահատելու համար պետք է նկատի առնել, վոր տեխնիկական մեզանից շատ ավելի առաջադեմ և կապիտալներով մեզանից անհամեմատ ավելի հարուստ Արևմտյան Յեվրոպան 1925 թվին իր 1913 թվի արտադրության 80—90 տոկոսին է հասել : Հատկապես ծանր վիճակում է գտնվում Անգլիայի արդյունաբերությունը, վորը 1924 թվին նախապատերազմականի 90 տոկոսն է ավել, իսկ 1925 թվին՝ միայն 80—85 տոկոս, այսինքն հետադիմել է : Քարածիր

արտադրությունն, որինակ, 1924 թ. նախապատերազմականի 92,2 տոկոսին էր հավասար, իսկ յերկաթի և պողպատի արտադրությունը՝ 86,7 տոկոսին, այնինչ 1925 թ. նրանցից առաջինն ընկել է մինչև նախապատերազմականի 88,2 տոկոսը, իսկ յերկրորդը՝ մինչև 76,2 տոկոսը : 1913 թ. դրության հետ համեմատած, մոտավորապես նույն տոկոսն է կազմում նաև Արևմտյան Յեվրոպայի 1925 թվի արտադրին առևտուրը՝ 82 տոկոսը :

Արդեն մինչև պատերազմը ցարական Ռուսաստանը տնտեսապես շատ ավելի հետամնաց էր, քան Արևմտյան Յեվրոպան, իսկ պատերազմի ընթացքում նրանցից առաջինը տնտեսապես շատ ավելի ուժեղ չափով տուժեց, քան յերկրորդը : Ինչպես տեսնում ենք աղյուսակից, 1920—21 տնտեսական տարում մեր արդյունաբերությունը միայն 899 միլիոն ռուբլու արժեք է ստեղծել, 83 տոկոսով 1913 թվից հետ մնալով : Հաշվի առնելով Արևելյան և Արևմտյան Յեվրոպայի տնտեսական դրությունը 1913, 1920 և 1925 թվականներին, այն յեզրակացությանն ենք հանդում, վոր Յեվրոպայի բուրժուական յերկրներին խորհրդային Միությունը տնտեսապես մեծ չափով դիջում է, սակայն իր տնտեսական աճման տեմպով նրանց բացորոշ կերպով դերազանցում է : Յեվ պետք է դեռ նկատի առնել, վոր ցարական Ռուսաստանի արդյունաբերության և առևտրի մեջ դրած ակցիոներական կապիտալների 55 տոկոսը արտասահմանյան բուրժուազիային էր պատկանում, այնինչ՝ խորհրդային իշխանությունն ոտարերկրյա կապիտալներից ոգտվելու հնարավորությունից համարյա ամբողջապես զուրկ է յեղել :

Միջազգային բուրժուազիան և մեր հակահեղափոխական կուսակցությունները խորհրդային կարգերի անկման նկատմամբ ունեցած իրենց հաշիվներում միշտ սխալվել են, վորովհետև մեր տնտեսական զարգացման խնդիրներին կապիտալիստական տնտեսությանը հատուկ մասշտաբով են մոտեցել : Յեթև սեփականությունը և իշխանությունը մեղ մոտ բուրժուազիայի ձեռքում դտնվելին, վերջինս անխուսափելիորեն միջազգային կապիտալին պետք է յնթարկվել, յերկրում գտողության կարգեր պետք է հաստատեր կամ տնտեսական փլուզումի դոհ պետք է գնար :

Կապիտալիզմին հատուկ արտադրության անարխիան և հավելյալ արժեքի դործադրման յեղանակները բուրժուական պետության և բուրժուական դասակարգերի կողմից՝ անհնարին կը դարձ-

նեյին տնտեսութեան արագ վերականգնումը և յերկրի անկախութիւնը, յետ 1920—21 թ. թ. տնտեսական փլուզումի պայմաններում մեզ մոտ բուրժուական կարգեր հաստատվելին: Յեզ յետ խորհրդային իշխանութեան հաջողվեց տնտեսապէս կործանված յերկրում և այսքան կարճ ժամանակաշրջանում տնտեսութեան բոլոր ճյուղերը վերականգնել և միջազգային կապիտալի շահագործումից յերկիրն ազատագրել, դրա պատճառն այն է, վոր մեր կարգերը վոչ թե բուրժուական, այլ խորհրդային են, և վոր խորհրդային իշխանութեան քաղաքականութիւնը հետևողական սոցիալիստական քաղաքականութիւն է: Հողի, արտադրութեան ու փոխանակութեան միջոցների, ինչպէս և արտաքին առևտրի ազգայնացումը խորհրդային իշխանութեանը հնարավորութիւն և տալիս՝ իր արտադրութեան տակ գտնվող արտադրութեան միջոցները և տնտեսական բոլոր ռեսուրսները տնտեսութեան առանձին ճյուղերի և յերկրի առանձին շրջանների միջև այնպէս բաշխել, նրանց շահագործումն այնպէս կազմակերպել, վոր այդ միջոցների շատ ավելի խոշոր տոկոսն և արտադրութեան պրոցեսի մեջ մտնողում, քան այդ կապիտալիստական արտադրութեան պայմաններում է հնարավոր, և համեմատաբար փոքր կապիտալների գործադրումով հաջողվում է ավելի բարձր հետևանքների հասնել, քան դրան բուրժուազիան է ընդունակ: Նույն ուղղութիւնը են գործում ծախսերի վերացումը կամ կրճատումը միապետութեան, կալվածատիրութեան, բուրժուազիայի և բուրժուական ինտելիգենցիայի բարձր խափերի վրա:

II.

Իր դիկտատուրայի շրջանում բանվոր դասակարգը սեփական ծրագրով և իր համար և տնտեսութիւն ստեղծում: Ճիշտ է, պետական արդյունաբերութեան մեջ վարձու աշխատանքը զեռ գոյութիւն ունի, սակայն նա հիմնովին տարբերվում է վարձու աշխատանքի այն յեղանակից, վորը կապիտալիստական տնտեսութեանն և հատուկ: Բանվորին վարձողը՝ մեզ մոտ վոչ թե կապիտալիստն է, այլ ինքը՝ պետականորեն կազմակերպված բանվոր դասակարգը: Վարձու աշխատանքի գոյութիւնը մեր պետական արդյունաբերութեան մեջ վոչ թե արտադրական հարաբերութիւնների կամ դասակարգային հարաբերութիւնների արդյունք է, ինչպէս այդ բուրժուական յերկրներում տեղի ունի, այլ մեր յերկրի տնտեսական հետամնացութիւնից, նրա աղքատութիւնից և բղխում: Բուրժուա-

կան յերկրներում բանվորը վարձվում է կապիտալիստի կողմից, վորովհետև պրոլետարը զուրկ է արտադրութեան միջոցներից, վորոնք կապիտալիստ դասակարգի ձեռքում են կենտրոնացած: Մեզ մոտ արտադրութեան և փոխանակութեան բոլոր հիմնական միջոցները բանվոր դասակարգի սեփականութիւնն են կազմում: Պրոլետարիատ բուրժուական յերկրների իմաստով մենք չունենք, քանի վոր բանվորութիւնը մեզ մոտ վոչ թե սեփականազուրկ և շահագործվող մի դասակարգ է, այլ սեփականատեր և իշխող դասակարգ, վորը Հոկտեմբերյան հեղափոխութեան միջոցով իր ձեռքն է առել և՛ արտադրութեան ու փոխանակութեան գլխավոր միջոցները և՛ յերկրի իշխանութիւնը: Բանվորը մեզ մոտ պրոլետար է միայն ձեռնադուրս, այն էլ ժամանակավորապէս, մինչև վոր տեխնիկայի կատարելագործումը և աշխատանքի արտադրողականութեան բարձրացումը խորհրդային իշխանութեանը հնարավորութիւն կը տան գյուղի և քաղաքի տնտեսութեան բոլոր ճյուղերում արտադրութիւնը սոցիալիստական հողի վրա դնել և աստիճանաբար վերջ դնել վոչ միայն բանվորի, այլ և գյուղացու գոյութեանը, աստիճանաբար վերացնելով նաև գյուղն ու քաղաքը, վորպէս միմյանց հակադիր տնտեսական մարմիններ:

Հակահեղափոխական կազմակերպութիւններին վերին աստիճանի շահավետ է իրենց համար սպանիչ այս դրութիւնը լուծեան մատնել և այնպէս ձեռնալ, վորպէս թե արտադրական հարաբերութիւնների բնագավառում Հոկտեմբերյան հեղափոխութիւնն առանձնապէս խոշոր փոփոխումներ չի կատարել: Սակայն պարզ է, վոր նման գործելակերպի կարող են ընդունակ լինել միայն մարդիկ, վորոնք վերջնականապէս անանկացել են և հիասթափութիւնից խելագարութեան ու հիմարութեան գիրկն են նետվում: Նախկին կալվածատերերի ու կապիտալիստների համար ուրիշ յեղք չկա: Այդ խելճ ու կրակ մարդիկ չեն մոռացել, ի հարկէ, վոր մինչև Հոկտեմբերյան հեղափոխութիւնն իրենք կալվածատերեր, գործաւանատերեր, բանկիրներ, նահանգապետներ, մինիստրներ ու մեծ իշխաններ էին, իսկ հրապարակորեն ինչպե՞ս կարող են խոստովանվել, վոր «ամբոխը» դա՛հ է բարձրացրել, ինչպե՞ս կարող են ցուցադրել Հոկտեմբերից ստացած մահացու վերքերը: Սակայն, յետ նախկին իշխող դասակարգերի համար իրենց սեփականազրկումից խոսելը ծանր է, պրոլետարիատը մեծապէս շահագրգռված է, վոր կալվածատերերի ու կապիտալիստների սեփակա-

նագրկման հետևանքով յերկրում հաստատված նոր արտադրական հարաբերությունների փաստն ազիտացիայի նյութ և քաղաքական կռիվի զենք դարձնի:

Միայն խզճալ կարելի չէ մարդկանց, վորոնք ճգնում են աշխարհից թազցնել համաշխարհային-պատմական այնքան մեծ արժեք ունեցող այդ փաստը, Հոկտեմբերյան հեղափոխության այդ խոչորագույն նվաճումը: Ինչ վերաբերում է պրոլետարիատին, վերջինս հերոսական ջանքեր թափեց վոչ միայն արտադրության ու փոխանակության միջոցներին տիրանալու համար, այլև աղ-գայնացրած սեփականությունը մեծագույն չափով և նպատակահարմար կերպով ողտադործելու համար: Այս վերջին ասպարիզում Խորհրդային Միության պրոլետարիատն իսկական հրաշքներ գործեց: Կիսաքաղց ու կիսամեղի՝ նա վերականգնեց յերկրի տնտեսությունը, վորովհետև իր սեփական տնտեսությունն եր վերականգնում, իր սեփական գործն եր կատարում: Ուրիշի համար այդպես չեն աշխատում: 1920—21 թվականներին մեղ վիճակված ծանր տնտեսական պայմաններում վարձկաններն անընդունակ կը լինեյին վերականգնել խորհրդային գործարանն ու հանքը, յերկաթուղին ու ջրանցքները: ԽՍՀ Միության տնտեսական վերելքի գործում այս հանգամանքն անսահման մեծ, ուղղակի վճռողական դեր է կատարել: Հաշվի չառնել բանվորի սոցիալական դրությունը խորհրդային կարգերում, նրա դրությունը մեր տնտեսական ու հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում, հաշվի չառնել մեր յերկրում իշխող արտադրական հարաբերությունները և փորձել մեր տնտեսական վերելքի պայմանները հասկանալ, փորձել մեր տնտեսական քաղաքական կյանքին վերաբերյալ այս կամ այն խնդրին ճիշտ լուծում տալ, նշանակում է իզուր եներգիա վատնել, նշանակում է ջուր ծեծել:

III.

Ատամները կրճտելով, միջազգային բուրժուազիան ստիպված էր ընդունել, վոր Խորհրդային Միությունը տնտեսապես աճում է: Դրա հետևանքով է, վոր մի շարք բուրժուական պետություններ ճանաչել են արդեն խորհրդային իշխանությունը: Իսկ խորհրդային իշխանության գործության և նրա բոլոր հաղթանակների աղբյուրը մեր յերկրում տիրող արտադրական հարաբերություններն են: Ըստ Համամիութենական Պետպլանի ավայ-

ների, խորհրդային հանրապետությունների տնտեսության բոլոր ճյուղերում արտադրության միջոցների ընդհանուր արժեքը 19,7 միլիարդ չեքվոն ուրբի յե: Այդ գումարից 11,7 միլիարդը կամ 59,5 տոկ. պետությանն է պատկանում, 0,5 միլիարդը (2,5 տոկ.)—կոոպերացիային և 7,5 միլիարդ (38 տոկ.) մասնավոր արտադրողներին, գլխավորապես՝ գյուղացիներին: Մեր գյուղատնտեսությունը համարյա ամբողջապես մանր արտադրության թաղավորություն է: Այդ ասպարիզում պետականացրած և կոոպերացման է յենթարկված արտադրության միջոցների հաղիվ 4 տոկոսը. մնացած 96 տոկոսը մասնավոր արտադրողների ձեռքում է կենտրոնացած*):

Այդ տեսակետից բոլորովին հակադիր պատկեր ունի քաղաքի տնտեսությունը: Արդյունաբերության մեջ—հաշված է յերկաթուղին—պետականացրած և կոոպերացման է յենթարկված արտադրության միջոցների 97 տոկոսը, միայն արդյունաբերության մեջ—89 տոկոս, իսկ խոչոր արդյունաբերության մեջ—99 տոկ: Իշխանության հիմքը և նրա պաշտպանության ամենազորեղ զործիքը՝ խոչոր արդյունաբերությունը՝ համարյա ամբողջապես խորհրդային իշխանության ձեռքում է կենտրոնացած, պրոլետարական դիկտատուրայի ամբողջական է ծառայում: Յերկրի հիմնական տնտեսական Փոնդերի մոտ 2/3 (62 տոկ.) սոցիալիստական տնտեսության չընկնողների մեջ է առած, արտադրության սոցիալիստական յեղանակով է ողտադործվում:

Արտադրության յեղանակն ու նպատակը, տնտեսության ամբողջ բովանդակությունը հեղաշրջվել, սոցիալիստական է դարձել, սակայն ըստ հին սովորության տնտեսական կատեգորիաները չարունակում ենք իրենց նախկին անուններով մկրտել, թեև մեր պետական արդյունաբերության մեջ չկան և չեն կարող լինել վոչ պրոլետարիատ ու վարձու աշխատանք՝ բուրժուական հասարակարգին հատուկ իմաստով, և վոչ հետևապես հավելյալ արժեք ու կապիտալ: Մեր պետական արդյունաբերության մեջ բանվորը չարունակում է պրոլետար կոչվել և արտադրության միջոցները՝ կապիտալ, ինչպես Լենինականի հին բնակիչները դեռ չարունա-

*) Թյուրիմացությունների տեղիք չտալու համար ավելորդ չե այստեղ հիշատակել, վոր այդ հաշվի մեջ հողի արժեքը չի մտնում, վորովհետև հողը կապիտալ չէ:

կում են իրենց քաղաքը Գյումրի կոչել կամ ինչպես Յերեանի փողոցներն ըստ վաղեմի սովորության «Աստաֆյան», «Յարսկի», «Գուբերնսկի» և հին ռեթիմից մնացած այլ անուններն են կրում: Խորհրդային տնտեսութեան անհամապատասխան բառերի ու վորոշ գաղափարների գործածութիւնը դեռ ավելի մեծ չափով նրանով է պայմանավորւում, վոր պետական տնտեսութեան կողքին դեռ գոյութիւն ունի մասնավոր կապիտալը, վոր մեր յերկրի բնակչութեան 80 տոկոսը գյուղատնտեսական մասն արտադրութեամբ է զբաղւած, և բոլոր գործազուրկներին աշխատանքով ապահովել դեռ չի հաջողւում: Հին տրադիցիաներից և սլոբոտարական դիկտատուրայի շրջանին անհամապատասխան բառերից, արտահայտութիւններից ու մտքերից հրաժարւիլը մեր առաջ կանգնած ամենակարևոր խնդիրներից մէկն է: Հարցը միայն այն չէ, վոր այժմյան իրականութեանը հակասող և այլ իրակա-նութիւնը ժխտող բառեր ու արտահայտութիւններ են գործած-վում: Ինչքան վոր նրանց գործածութիւնը մասսայական ընդ-վում է կրում, առաջին հայացքից անմեղ թվացող այդ յերևույթը խո-շոր քաղաքական նշանակութիւն է ձեռք բերում, միազնեւով չառ-չատերի դասակարգային—սոցիալիստական դիտակցութիւ-նը, միաժամանակ մեր թշնամիներին հակախորհրդային ագիտա-ցիայի նյութ մատակարարելով:

Յերկրում գտնվող արտադրական միջոցների 62 տոկոսը խոր-հրդային իշխանութիւնն արդեն հանրային սեփականութիւն է դարձրել և իր կազմակերպած սոցիալիստական տնտեսութեան գոր-ծին է ծառայեցնում: Յոթ և կես միլիարդ ուրուի արժեք ներկա-յացնող մնացած 38 տոկոսը Խորհրդային Միութեան բնդհանուր տնտեսութեան մեջ՝ արտադրանքի քանակի նկատմամբ՝ չափա-դանց կարևոր դեր են կատարում: Սակայն, ինչպես վերև նկատե-ցինք, այդ 38 տոկոսը գլխավորապես գյուղատնտեսութեանն է վերաբերում, վորտեղ իշխող է հանդիսանում մասն արտադրու-թիւնը՝ վերջինիս հատուկ հետամնաց, համարյա ամբողջապես միջնադարյան տեխնիկայով և նույնքան հետամնաց՝ արտադրու-թեան յեղանակներով: Խորհրդային կարգերում խոշոր հողատի-րութիւնն առաջանալ չի կարող: Մի կողմ թողնելով բոլորնեղե-րին, վորոնք մեր բոլոր հանրապետութիւններում գյուղացիու-թեան ընդհանուր թվի մի աննշան տոկոսն են կազմում, տեսնում ենք, վոր մեր գյուղացիական ամբողջ մասսան՝ հողի ազգայնաց-

ման և Խորհրդային իշխանութեան պայմաններում՝ իր տնտեսու-թիւնը միայն կոոպերատիվ արտադրութեան միջոցով կարող է բարձրացնել, իսկ սլոբոտարիատի դիկտատուրայի շրջանում գյուղատնտեսական արտադրական կոոպերացիայի քանակային ու վորակային աճումը միայն սոցիալիզմի ուղիով է հնարավոր:

Բարձր գյուղատնտեսական կուլտուրան իր կազմակերպման անհրաժեշտ արտադրութեան միջոցները և ագրոնոմիական դիտե-լիքները միայն քաղաքի արդյունաբերութիւնից և քաղաքում մշակվող դիտութիւններից կարող է ստանալ, ինչպես և իր ար-տադրանքի ապրանքային մասը գլխավորապես քաղաքի գործարա-նային արդյունաբերութեանը և քաղաքի բնակչութեանը կարող է վաճառել: Իսկ քաղաքում իշխողը սոցիալիստական արդյունաբե-րութիւնը, սոցիալիստական դիտութիւնը, սոցիալիստական միտքն են: Գյուղատնտեսութեան կախումը գործարանային արդյունաբերութիւնից կասկածից դուրս է: Յե՛ւ վ կապիտալիս-տական և՛ խորհրդային յերկրներում նրա առաջխաղացումը, նրա ռացիոնալիզացիան միայն քաղաքի արդյունաբերութեան և քաղաքի գիտութեան միջոցով է հնարավոր:

Պրոլետարիատի դիկտատուրայի շրջանում, այսինքն մի շըր-ջանում, յերբ իշխանութեան գլուխ է անցած բանվոր դասակարգը, յերբ յերկրի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական ամբողջ կյանքի վերջ բանվոր դասակարգի ձեռքում է կենտրոնացած, գյուղատնտեսութիւնը քաղաքից այնքան ավելի մեծ չափով տըն-տեսական, քաղաքական ու կուլտուրական ոժանդակութիւն կը ստանա, ինչքան ավելի մեծ չափով այդ ոժանդակութիւնը հա-նուն սոցիալիզմի կը գործադրվի, ինչքան ավելի մեծ չափով գյուղատնտեսական արտադրութիւնը կոոպերացման կենթարկվի և գյուղի տնտեսական ու հասարակական կյանքում սոցիալիզմի իշխանութիւնը կը հաստատվի: Տնտեսական ու կուլտուրական զարգացման այլ ուղիներ գյուղացիական մասսայի համար չկան, չկան վոր մեղ մտտ և վոր բուրժուական յերկրներում: Ամբողջ աշ-խարհի գյուղացիական մասսան, բացառութեամբ նրա վերին կա-պիտալիստական խավերի, իր փրկութիւնը կապիտալի շահա-գործումից միայն սոցիալիզմի մեջ կարող է գտնել: Այժմյան գյուղատնտեսական տեխնիկայի և գյուղատնտեսական գիտու-թիւնների լայն ռզտագործումը միայն խոշոր արտադրութեան պայմաններում է հնարավոր:

Մեր որերի բնական ու տնտեսական—հասարակական պայմաններում բոլոր գյուղացիները չեն կարող խոշոր կալվածներ ձեռք բերել, ինչպես բոլոր բանվորները չեն կարող խոշոր գործարաններ կամ յերկաթուղիներ ու նավեր ունենալ: Յեթե նման իլլուզիաներով սնվող խելագարներ կան, նրանք հաշվի չեն առնում վոչ հողի տարածությունը մեր մոլորակի վրա, վոչ շուկայի պայմանները և վոչ այն, թե ո՞վ է աշխատելու այդ կալվածներում ու դործարաններում, յեթե բոլորի համար գործարանատերեր ու կալվածատերեր դառնալու հնարավորություն չկան:

Ինչ վերաբերում է բուրժուազիայի և մանր-բուրժուական սոցիալիզմի դիրքին գյուղատնտեսական մանր արտադրության մեծ ապագայի նկատմամբ, պետք է իմանալ, վոր այստեղ դործ ունենք մի չափազանց ունակցիոն և հետևապես գյուղացիական մասսայի համար չափազանց վնասակար ուսմունքի հետ: Ծիշտ է սոսաճակարգ կապիտալիստական յերկրներում գյուղատնտեսական մանր արտադրությունը շատ ավելի ռացիոնալ հիմունքներով և տարվում, մեր դարի տեխնիկայից ու բնական գիտություններից անհամեմատ ավելի լայն չափերով և ոգտվում, քան մեզ մոտ: Սակայն, ավելի արտադրել, քան Հայաստանի կամ Ռուսաստանի գյուղացին է դրան ընդունակ՝ դեռ չի նշանակում այնքան արտադրել, ինչքան մեր ժամանակի տեխնիկան ու գիտությունն այդ հնարավոր են դարձնում: Գերմանական կամ անգլիական արհեստավորն իր փոքրիկ արհեստանոցում Տ-ժամյա բանվորական ուրում 2-3 անգամ ավելի յե արտադրում, քան նույն Տ-ժամվա ընթացքում ընդունակ է արտադրել հայ, թուրք, վրացի կամ ռուս արհեստավորը: Սակայն ինչքան վոր գոյություն ունի խոշոր գործարանային արտադրությունը, անգլիական կամ գերմանական մանր արհեստանոցը չենք կարող մեր ձգտումների առարկա, մեր իղեալը դարձնել: Այդ դեպքում մենք ավելի հետամնաց, ավելի հակահեղափոխական կը լինենք, քան ինքը բուրժուազիան է:

Յեվրոպայում ռացիոնալ հիմունքներով զարգացող մանր գյուղատնտեսական արտադրության հանդեպ նույն դիրքն ենք պաշտպանելու, ինչ և նույն Յեվրոպայի մանր արհեստավորական արտադրության հանդեպ: Գյուղատնտեսության անխտիր բոլոր ճյուղերում խոշոր ռացիոնալ արտադրությունը մանր ռացիոնալ ար-

տադրությունը նույնքան և գերազանցում, ինչքան խոշոր մեքենայական արտադրությունը գերազանցում է մանր արհեստավորական արտադրությանը, թեկուզ վերջինս ամենակատարելագործված յեղանակներով տարվելիս լինի:

Մեզ կարող են առարկել, վոր այժմյան գյուղատնտեսական գիտությունը՝ հանձինս իր մի շարք խոշոր ներկայացուցիչների՝ մանր գյուղատնտեսական արտադրության լիակատար ռացիոնալիզացիան միանգամայն հնարավոր է համարում և նույն իսկ գտնում է, վոր ռացիոնալ տնտեսություն կազմակերպելու տեսակետից գյուղատնտեսության ասպարիզում մանր արտադրությունը պետք է գերադասել խոշորին, վոր վերջինիս հետ համեմատած՝ առաջինը շատ մեծ առավելություններ ունի: Այո, բուրժուական և մանր բուրժուական գիտության մեջ այդ տեսակետը վոչ միայն գոյություն ունի, այլ և գերիշխող է հանդիսանում: Գիտությունը դասակարգային է: Առավել ևս դասակարգային են այն գիտությունները, վորոնք անմիջապես կալվածատերերի ու կապիտալիստների գրպանի շահն են պաշտպանում: Բուրժուական գիտությունը չի կարող կանգնել այն տեսակետի վրա, վոր ամենառացիոնալ գյուղատնտեսությունը խոշոր արտադրություն է պահանջում: Հետեողական լինելով, այդ դեպքում նա պետք է պահանջի, վոր բուրժուական պետությունների տնտեսական ամբողջ քաղաքականությունը գյուղատնտեսական կոոպերացիայի պաշտպանությունը նվիրված լինի, այսինքն, բուրժուազիային պետք է թելադրի՝ գյուղատնտեսության մեջ անտիճանաբար սոցիալիստական կարգեր հաստատել, սեփական ձեռքով իր իշխանությունը վերացնել:

Բուրժուազիան ներկայիս ամենակրթված ու ումենագիտակից դասակարգն է: Իր շահերը պաշտպանելու, այսինքն՝ աշխատավոր մասսաներին թալանելու գործում նա ուղղակի հանճարեղ է: Պետք է ծայրահեղ տգետ ու միամիտ լինել, կարծելու համար, վոր բուրժուական գիտությունն այսպես կոչվող սրողքեսի, մարդկային հասարակության անդադար առաջխաղացման խնդիրներով է զբաղվում: Գիտության ապագասակարգային բնույթն այսօր կարող են պաշտպանել միայն պարզ հակահեղափոխականները կամ անհուսալի բթամիտ ու փտած մարդիկ: Գյուղատնտեսության նկատմամբ բուրժուական գիտության կողմից բռնած դիրքը դեռ ավելի պարզաբանելու համար ավելորդ չի լինի հիշատակել այստեղ, վոր

մանր արհեստավորական արտադրութեան ջատագովներով եւ բուրժուական քաղաքատնտեսութիւնը չափազանց հարուստ է :

Բանվոր դասակարգի եւ աշխատավոր գյուղացիութեան շահերը՝ տնտեսական զարգացման ուղիների նկատմամբ՝ զուգադիպում են եւ մեզ մոտ, եւ բուրժուական յերկրներում : Արտադրողական ուժերի նոր, ավելի բարձր աստիճանի զարգացումը մասնավոր սեփականութեան դիմադրութեանն է հանդիպում : Վերջինիս նեղ շրջանակներն անհնարին են դարձնում վոչ միայն արտադրողական ուժերի ազատ աճումը, այլ եւ գոյութիւն ունեցող արտադրութեան միջոցների ու արտադրութեան կատարելագործման յեղանակների լիակատար ոգտագործումը : Արտադրութեան միջոցների մասնավոր սեփականութիւնը, վորպէս տնտեսական առաջխաղացման արգելակ, խորհրդային յերկրներում հատկապէս զգալի յէ գյուղատնտեսութեան մեջ, վորտեղ արտադրութեան միջոցների 96 տոկոսը դեռ այսօր եւ մասնավոր մասնավոր սեփականութիւնն է : Կոոպերացման միջոցով այդ 96 տոկոսը բարձր, ռացիոնալ հիմունքներով ոգտագործել, գյուղատնտեսութեան մեջ այդ ճանապարհով խոշոր արտադրութիւն ստեղծել եւ գյուղատնտեսութիւնը սոցիալիստական դարձնել՝ ահա խորհրդային իշխանութեան առաջ կանգնած ամենամեծ խնդիրը, առանց վորի յուծման անհնարին է տնտեսութեան բոլոր ճյուղերում պլանաչափ սոցիալիստական արտադրութիւն ստեղծել եւ հետեողական սոցիալիստական կարգեր հաստատել մի յերկրում, վորի բնակչութեան չորս հինգերորդ մասը գյուղացիութիւնն է կազմում :

Բուրժուական յերկրներում գյուղատնտեսական կոոպերացիան խոշոր կապիտալի մրցմանը չի դիմանում, պետութեան կողմից ոգտութեան չի հանդիպում եւ վաղ թե ուշ քայքայվում կամ ուժեղացման դեպքում՝ կապիտալիստական ակցիոներական ընկերութեանն է վերածվում, վորին անդամակցել եւ վորի վաստակից ոգտվել միայն հարուստ գյուղացիութիւնն է կարողանում : Գյուղատնտեսական կոոպերացիայի աճմամբ մեզ մոտ, խորհրդային կարգերում, վոչ միայն աշխատավոր գյուղացիութիւնն է շահադիպում, այլ եւ ինքը պետական իշխանութիւնը, բանվորների եւ գյուղացիների իշխանութիւնը, վորն առաջացել ու կազմակերպվել է սոցիալիստական հեղափոխութեան բովում, եւ վորի կոչումն է՝ յերկրում սոցիալիստական տնտեսութիւն ու սոցիալիստական կարգեր հաստատել : Բանի վոր մանր գյուղատնտեսութիւնից սոցիալիս-

տական գյուղատնտեսութեան անցնելու միակ ճանապարհը կոոպերատիվ արտադրութիւնն է, խորհրդային ու սոցիալիստական ամեն մի հանրապետութեան իշխանութիւն, հնարավորութեան սահմաններում, գյուղատնտեսական կոոպերացիային ամեն տեսակ նյութական ու քաղաքական աջակցութիւն է ցույց տալիս :

V.

Պրոլետարիատի եւ աշխատավոր գյուղացիութեան դաշինքի, նրանց բարեկամութեան եւ համերաշխութեան գործն այսքան խոր դնացող արմատներ ունի : Առանց գործարանային արդյունաբերութեան ռացիոնալ գյուղատնտեսական արդյունաբերութիւնն՝ անհնարին է առանց գյուղատնտեսութեան : Բուրժուական հասարակութեան մեջ, վորտեղ արտադրութեան անարխիան է իշխող հանդիսանում, այսինքն, վորտեղ պլանաչափ տնտեսութիւն գոյութիւն չունի, գյուղատնտեսութեան եւ գործարանային արդյունաբերութեան այդ կապը ջողարկվում է թե պլանաչափ տնտեսութեան բացակայութիւնով ու կապիտալի իշխանութեամբ՝ գյուղի վրա եւ թե նրանով, վոր Յեվրոպայի կապիտալիստական յերկրները գյուղատնտեսական միջերեքները զլխավորապէս դաղութային կամ կիսադաղութային յերկրներից են ստանում : Սոցիալիստական հասարակութեան մեջ գործարանային արդյունաբերութիւնը վոչ փաստորեն եւ վոչ ձեականորեն գյուղատնտեսութեանը հակադրվել չի կարող : Սոցիալիստական տնտեսութիւնը պլանաչափ կերպով կազմակերպված մի ամբողջութիւն է, վորի պայմաններում վերանում են գյուղն ու քաղաքը, վերանում են նաեւ բանվորն ու գյուղացին, վորպէս արտադրողների առանձին կատեգորիաներ : Այս կատեգորիաները վոչ թե մշտնջենական, այլ սլատմական են : Ազադատակարգային սոցիալիստական հասարակութիւնն ունի առհասարակ արտադրողներ, բայց վոչ բանվորներ կամ գյուղացիներ :

Վորակալ գործարանային բանվորը նյութական ու բարոյական շատ ավելի նպաստավոր պայմաններում է ապրում, քան միջակ գյուղացին : Վերջինս անպայման առաջինին նախանձնու հիմք ունի : Սոցիալիստական տնտեսութիւնը եւ սոցիալիստական հասարակա-

բացեն նաև նրանց գյուղի տարբերությունը: Գյուղատնտեսական կոոպերացիայի միջոցով գյուղացին այդ ուղղությամբ առաջին խոշոր քայլն է անում, բարձրացնելով իր գոյությունը նյութական ու բարոյական մակարդակը, ազատագրվելով բռնակցից և առևտրական կապիտալի չահագործումից և բրնձից: Գյուղացիական հանգեպ նոր, ավելի ամուր գիրքեր գրավելով:

Միայն կոոպերացիայի միջոցով է, վոր գյուղացիական մանր տնտեսությունները կարելի չէ միացնել և գյուղում սոցիալիստական կարգեր մտցնել: Այս ուղղությամբ խորհրդային գյուղում ահաջին աշխատանք է կատարված: 1924 թվի հունվարի մեկին գյուղատնտեսական կոոպերացիային անդամակցում էր 1,470,000 տնտեսություն, մի տարի հետո—2,650,000 (+ 80 տոկոս) և մեկ ու կես տարի հետո, առ 1-ին VII 25 թ.—3,900,000 (+ 165 տոկոս): Ըստ իր անդամների թվի մեկ ու կես տարվա ընթացքում գյուղատնտեսական կոոպերացիան աճել է ավելի, քան յերկու և կես անգամ: Սակայն, ինչպես մեր կուսակցական 14-րդ համագումարն ընդգծեց Կենտկոմի գեկուցման առթիվ ընդունած իր բանաձևում, «գյուղատնտեսական կոոպերացիան դեռ հեռու չէ իր մեծ դերը կապարելուց՝ և իր տնտեսական աշխատանքից, և՛ մասսաներին գրավելու տեսակետից, և՛ գյուղի սոցիալիստական ղեկավարության տեսակետից»:

Նրա հիմնական բացն այն է, վոր հողի մշակման գործում գյուղացիությունը կոոպերացման դեռ չի յենթարկվել: Այդ ասպարիզում առաջիմ կա միայն կուլեկտիվ հողագտադրում, վորն ընդգրկում է 21,923 կուլեկտիվ՝ 1,085,465 շունչ գյուղացիներով և 2,974,001 զեսյատին հողով: Մոտավորապես նույն պատկերն է ներկայացնում և՛ Խորհրդային Հայաստանի գյուղատնտեսական կոոպերացիան: Առ մեկն հոկտեմբերի 1925 թ. մեզ մոտ 147 կոոպերատիվ էր գործում՝ 19,153 անդամ-տնտեսությունով: Առաջին տեղը նրանց մեջ բռնում են կաթնատնտեսական կոոպերատիվները՝ 71 ընկերություն—5325 անդամով և վարկային ընկերությունները՝ 80 կազմակերպություն—11,492 անդամով: Արտադրական կոոպերացիայի բոլոր տեսակներն ընդամենը միայն 7661 տնտեսություն և կազմակերպված (5325՝ կաթնատնտեսական, 875՝ ալգեգործական, 693՝ մեղվաբուծական և 509՝ խառն ընկերությունների անդամ):

Խորհրդային իշխանության տնտեսական պլանի տեսակետից՝ «իր մեծ դերը կատարելուց գյուղատնտեսական կոոպերացիան դեռ հե-

ուռ չէ»: Սակայն հաշվի առնելով մեր յերկրի տնտեսական անցյալն ու ներկան և ամենից առաջ հաշվի առնելով մեր գյուղատնտեսության տեխնիկական ծայրահեղ հետամնացությունը, ինչպես և գյուղացիական լայն մասսաների կուլտուրական ու քաղաքական պարզացման ցած մակարդակը, գյուղատնտեսական կոոպերացիայի ասպարիզում կատարած աշխատանքը չենք կարող չընդունել, վորպես Խորհրդային իշխանության տնտեսական շինարարության ամենամեծ հաղթություններից մեկը:

Մեր յերկրը վերջնականապես սոցիալիստական դարձնելու տեսակետից գյուղատնտեսական կոոպերացիայի դերը դժվար է գերազնահատել: Սակայն՝ գյուղատնտեսական կոոպերատիվի ամեն մի ղեկավար իր աշխատանքի ամեն մի քայլափոխում պետք է հիշե, վոր գյուղատնտեսական կոոպերացիան մի ինքնարավ մեծություն չէ և վոր նրա աճման ու տեխնիկական առաջխաղացման հիմնական պայմանը մեր գործարանային արդյունաբերությունն է՝ պրոլետարական ղեկատնտեսայի և մեր ամբողջ սոցիալիստական տնտեսության այդ բազան: Գյուղատնտեսական արտագյուղական մեքենայացումը և էլեկտրիֆիկացիան, ինչպես և նրա արտադրանքի ու ալիքացիան միայն այն չափով կարող են կիրառվել, ինչ չափով վոր կաճեն ու կզորեղանան մեր խոշոր գործարանային արդյունաբերությունը և մեր յերկայիցի: Առանց խոշոր արդյունաբերության աճման գյուղատնտեսությունը կը զրկվի նաև այն ղիտություններից ու այն ղիտական ուժերից, վորոնք անհրաժեշտ են ուսցիոնայ գյուղատնտեսության բոլոր ճյուղերի համար: Գյուղատնտեսական կոոպերացիայի տարածման և ուժեղացման գործի առաջ դեռ շատ խոչնդոտներ ու դժվարություններ են կանգնած, սակայն, այդ բոլոր խոչնդոտներն ու դժվարությունները 90 տոկոսով կը գոլորշիանան, յերբ մեր յերկիրը լայն չափերով ինդուստրիալիզացիայի կենթարկվի:

VI.

Խորհրդային հանրապետությունների տնտեսության բոլոր բաղկացուցիչ մասերը հաշվի առնելով, տեսնում ենք, վոր մանր արդյունաբերության թափափությունը ներկայացնող գյուղատնտեսությունը դեռ այսօր էլ մոտ յերկու անգամ ավելի արժեք է ստեղծում, քան գործարանային արդյունաբերությունը, և վոր բնակչության 80 տոկոսը նրա չուրջն է կազմակերպված:

իր ժամանակին ներկայիս առաջնակարգ կապիտալիստական յերկրների տնտեսութեան մեջ եւ գյուղատնտեսութեան արտադրութեան նույնպէս խոշոր դեր եւ կատարել։ Սակայն՝ կապիտալիստական տնտեսութեան աճումը համապատասխան յերկրի գյուղացիական լայն մասսաների պրոլետարիզացիայով, նրանց մասնակի կամ լիակատար կործանումով եւ պսակվել։

Բոլոր առաջնակարգ կապիտալիստական յերկրներում հողի 60-80 տոկոսը միջակ ու խոշոր կալվածատերերի եւ գյուղական բուռնցքների ձեռքում եւ կենտրոնացած։ Գյուղացիութեանն այս վիճակին եւ արժանացել վոչ միայն Անգլիայի կամ Գերմանիայի նման յերկրներում, վորտեղ բուրժուազիան իր հեղափոխութեան ներքին ընթացքում միջնադարյան կալվածատիրութեանը կործանելու անդոր եւ յեղել, այլեւ Ֆրանսիայում, վորտեղ 1789 թվի մեծ հեղափոխութեանը վերջ դրեց կալվածատիրութեանը, այլեւ Հ.Ա.Մ. Նահանգներում, վորտեղ միջնադարյան կալվածատիրութեանն առհասարակ գոյութեան չի ունեցել։ Բուրժուական գիտութեան կողմից այնքան փառաբանած ազատ մրցումն աշխատավոր գյուղացիութեան համար իսկական գերեզմանախորի դեր եւ կատարել։ Իսկ վորտեղ ազատ մրցումն իր կործանիչ դերը դանդաղ եւ կատարել, այնտեղ բուրժուազիան հրի ու սրի ոգնութեանն եւ դիմել եւ այս ճանապարհով գյուղացու հողին տիրացել։ Գյուղացու պրոլետարիզացիայի այս վերջին յեղանակի կլասիկ որինակը Անգլիան եւ։ Բոլոր բուրժուական յերկրներում կապիտալի կուտակմանը զուգնթացարար տեղի յե ունենում նաեւ հողի կուտակումը, նոր՝ կապիտալիստական կալվածատիրութեան ձեռքում։

Խորհրդային գյուղացին հողից զրկվել չի կարող։ Դրա յեւրաշխիքն եւ հողի ազգայնացումը։ Ինչ վերաբերում եւ նրա արտադրութեան ուղղորդմանը, պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում վերջինս 90 տոկոսով միայն կոոպերատիվ բնույթի արդյունաբերութեանը համարյա ամբողջապէս ազգայնացրած եւ եւ նրա շահագործումը Խորհրդային իշխանութեան կողմից միայն սոցիալիզմի հողի վրա եւ միայն հանուն սոցիալիզմի կարող եւ կատարվել, գործարանային արդյունաբերութեան եւ գյուղատնտեսութեան միջեւ մեղ մոտ բոլորովին այլ տեսակի կապեր են հաստատվում, քան բուրժուական յերկրներում։ Խորհրդային իշխանութեանը բանվորների եւ գյուղացիների իշխանու-

թեան եւ՝ բանվոր դասակարգի ղեկավարութեամբ։ Հակահեղափոխական կամ կատարելապէս իդիոտ պետք եւ լինել, յենթադրելու համար, վոր Խորհրդային իշխանութեանը, այսինքն՝ ինքը բանվոր դասակարգը, բանվոր դասակարգին շահագործել կարող եւ։

Մեր ապրած պայմաններում անհնարին եւ նաեւ գյուղի շահագործումը քաղաքի կողմից, աշխատավոր գյուղացիութեան շահագործումը պրոլետարիատի կողմից։ Վերջինս շատ անհեռաւոր եւ իր դիկտատուրան ամբողջելու անընդունակ կը լինել, յետեւ իր սոցիալիստական տնտեսութեան կազմակերպումը գյուղացու շահագործման վրա հիմնել։ Ընդհակառակը, պրոլետարիատի շահն եւ՝ աշխատավոր գյուղացիութեան բոլոր խավերի հետ ամենաբարեկամական հարաբերութեաններ հաստատել եւ նրանց հետ ձեռք ձեռքի տված թե՛ ներքին ու արտաքին կապիտալի դեմ կռվել եւ թե՛ գյուղի ու քաղաքի տնտեսութեան բոլոր ճյուղերում սոցիալիստական արտադրութեան մտցնել։ Ինչպէս 14-րդ համագումարի բանաձեւումն եւ ասված՝ «գյուղում սոցիալիզմ կառուցելու հիմնական ուղին այն եւ, վոր պետական սոցիալիստական արդյունաբերութեան, պետական վարկային հիմնարկների եւ պրոլետարիատի ձեռքում գտնվող այլ իշխող զինքների աճող տնտեսական ղեկավարութեամբ՝ գյուղացիութեան հիմնական մասսան կոոպերատիվ կազմակերպութեան մեջ զբաղվել եւ այդ կազմակերպութեանը սոցիալիստական դարգացման հնարավորութեանն ապահովել, ոգտագործելով, հաղթահարելով եւ վերացնելով նրա կապիտալիստական տարրերը»։

Նույն բանաձեւում կարգում ենք. «Յետեւ չբանվորութեանը եւ ամենից առաջ բատրակները պրոլետարիատի հեմարաճն են գյուղում, միջակն եւ՝ եւ պետք եւ լինի նրա հաստատուն դաշնակիցը»։

Տնտեսական ու քաղաքական այն հիմնական ուժերն ու դիրքերը, վորոնք բուրժուական հասարակարգում կապիտալիստների ձեռքումն են կենտրոնացած եւ բանվորին ու գյուղացուն շահագործելու ղենք են ծառայում, մեղ մոտ բանվոր դասակարգի սեփականութեանն են կազմում եւ նրան հնարավորութեանն ու միջոց են տալիս՝ գյուղում ու քաղաքում սոցիալիզմ մտցնելու, գյուղը շահագործելու փոխարեն՝ նրան ամեն կերպ աջակցելու, արագացնելով նրա սոցիալիստական վերածնունդը։ Խորհրդային իշխանութեան տրամաբերութեան տակ են գտնվում համարյա ամբողջ արդյունաբերութեանը, յերկաթուղին, Ֆինանսները, արտաքին առևտուրը եւ ներքին առևտրի յերեք քառորդը (վերջինս՝ կոոպերատիայի հետ միասին)։

Աշխատավոր գյուղացիութեանը սոցիալիստական ոգնութեամբ հասցնելու, գյուղատնտեսական արտադրութեանը ելեքտրիֆիկացիայի և առհասարակ մեքենայացման յենթարկելու գործը բացառապէս նրանով է պայմանավորւում, թե մեր գործարանային արդյունաբերութեան ու գյուղատնտեսութեան ինչ չափով կանոնաւորուի և կնդարձակվեն և հիշյալ նպատակի իրականացման համար խորհրդային իշխանութեան տրամադրութեան տակ ինչ միջոցներ կը գտնուին:

Իր գլխավոր դիրքերը կապիտալը մեզ մոտ պրոլետարիատին և զիջել, սակայն, դեռ վերջնականապէս չի կործանվել, իր վերահասանելի հուշերից դեռ վերջնականապէս չի հրաժարվել: Գյուղացիութեան վրա հենվելով և նրա հետ ձեռք ձեռքի տված՝ պրոլետարիատը տիրել է իշխանութեանը և արտադրութեան ու փոխտնտեսութեան հիմնական միջոցներին, կազմակերպել է իր սոցիալիստական տնտեսութեանը և մեր տնտեսական ու հասարակական կյանքի բոլոր բնագավառներում քայլ առ քայլ սոցիալիստական կարգեր և մտցնում, հետեւողական սոցիալիստական քաղաքականութեան և վարում, սակայն յերկրի տնտեսական հետամնացութեան պատճառով սոցիալիզմի վերջնական հաղթանակն ապահովելը դեռ չի կարողացել: Այդ պատճառով էլ այս ջրջանը կապիտալիզմից դեպի սոցիալիզմ տանող անցողական շրջան է, վորի պայմաններում մեր տնտեսութեան սոցիալիստական ու կապիտալիստական տարրերի միջև կյանքի ու մահվան կռիվ է մղվում, մի կողմից՝ հանուն սոցիալիզմի, մյուս կողմից՝ հանուն կապիտալիստական կարգերի վերականգնման:

Մեր կապիտալիստական բուրժուազիայի հանդեպ պրոլետարիատն այնքան զորեղ է, այնքան ամուր գիրքեր և գրավել, վոր անմիջապէս նրա կողմից հարձակման յենթարկվել չի կարող, մերցման պրոցեսում պարտութեան վտանգն այդ կողմից բացակայում է: Այդ նույն պատճառով մեր կապիտալիստական բուրժուազիան պրոլետարիատի իշխանութեան և նրա սոցիալիստական արդյունաբերութեան դեմ անմիջապէս կռիվելու ծրագիր չունի: Պրոլետարիատին մեր ներքին կապիտալիստական բուրժուազիայի կողմից անմիջապէս վտանգ չի սպառնում, բուրժուազիան էլ իր տրամադրութեան տակ արտադրութեան միջոցների և առհասարակ կապիտալի այնքան չնչին պաշար ունի, վոր մրցել մեր սոցիալիստական-պետական արդյունաբերութեան դեմ չի ել յերազում:

և կյանքի այդ ասպարիզում բավարարվում է գործակաւաւրի դեբաւ, խորհրդային իշխանութեան մշակած ծրագրով, նրա թելադրանքով ու նրա ղեկավարութեամբ և գործում:

VII.

Պրոլետարիատին, նրա պետութեանը և նրա սոցիալիստական տնտեսութեանն սպառնացող վտանգը բոլորովին այլ կողմից և գալիս: 1917—20 թ. թ. ընթացքում բուրժուազիան զրկվեց այն նյութական միջոցներից, վորոնցից ոգտվելով միայն կարող էր խորհրդային իշխանութեանը կռիվ հայտարարել: Նման միջոցներից ու հնարավորութեաններից այսօր նա դուրս է, սակայն այդ միջոցներն ու հնարավորութեանները կարող է ձեռք բերել, յեթե միջակ գյուղացիութեանը տնտեսապէս նվաճի և նրա շահագործման միջոցով թե քայքայի խորհրդային իշխանութեան սոցիալիստական շինարարութեանը գյուղում, գյուղատնտեսութեան զարգացումը կապիտալիզմի ուղիով տանի և թե այդ ճանապարհով, այն է՝ գյուղացիական լայն մասսաների տնտեսական քայքայման ու նրանց շահագործման ճանապարհով՝ նոր կապիտալներ ու կռիվ նոր միջոցներ կուտակի, վորոնք հետագայում նրան հնարավորութեան կը տան մեր պետական արդյունաբերութեան հետ մրցել, նրա գոյութեանը կռիվ հայտարարել: Բուրժուազիայի ու ժեղացումը մեզ մոտ 90 տոկոսով գյուղի հաշվին, գյուղացու շահագործման, նրա տնտեսական քայքայման գնով կարող է ձեռք բերվել:

Միջակ գյուղացիութեանը մանր բուրժուական տարր է, վորի տնտեսութեանը կարող է և՛ կապիտալիզմի և՛ սոցիալիզմի ուղիներով զարգանալ: Կապիտալիզմի ուղին միջակ գյուղացիական մասսայի քայքայումն ու պրոլետարիզացիան չնչնակում, այդ մասսան բուրժուազիայի ձեռքում նոր կապիտալներ կուտակելու և խորհրդային կարգերի դեմ կռիվելու գործիք է դարձնում: Գյուղատնտեսութեան զարգացման սոցիալիստական ուղին միջակ գյուղացուն՝ նրա հետ միասին և՛ աշխատավոր գյուղացիութեանը բուրժուազիայի մարերին՝ կապիտալի շահագործումից, տնտեսական քայքայումից ու պրոլետարիզացիայից վերջնականապէս ազատագրում է և նրանց համար հնարավորութեան է ստեղծում՝ պրոլետարիատի հետ ձեռք ձեռքի տված, նրա ղեկավարութեամբ ու նրա սոցիալիստական արդյունաբերութեան ոգնութեամբ բարձ-

րացնել գյուղատնտեսութեան մեջ աշխատանքի արտադրողականութիւնը, գյուղատնտեսութեան մեքենայացման յենթարկել և կոոպերատիվ արտադրութեան միջոցով ու նրա վերայով գյուղում սոցիալիստական տնտեսութիւն ու սոցիալիստական կարգեր հաստատել:

Խորհրդային իշխանութիւնը, արդյունաբերութեան և հողի, ֆինանսների և արտաքին առևտրի աղագնացումը բանվորի և գյուղացու միացյալ ուժերով են նվաճած, նրանց յերկուսի արյունով են սրբազործած: 1917—20 թ. թ. ընթացքում քաղաքացիական կռիւների դաշտում նրանց մեջ կնքած հաստատուն հեղափոխական դաշինքը կործանելու գնով և, վոր մեր տնտեսութեան կապիտալիստական տարրերը կարող են զօրեղանալ և պրոլետարիատի պետական տնտեսութեան ու նրա զիկտատուրայի համար վտանգավոր դառնալ: Բայց ՆԵՊ-ի շրջանում՝ խաղաղ սոցիալիստական շինարարութեան շրջանում՝ այդ դաշինքը գեռ ավելի ամրացավ, չքավոր ու միջակ գյուղացին գեռ ավելի համոզվեցին, վոր իրենց փրկութեան միակ ճանապարհը սոցիալիզմի ճանապարհն է, և վոր սոցիալիզմի նվաճումը գյուղի համար անհնարին է, յեթե պրոլետարիատի հետ գյուղացին ամուր դաշինք չի կնքում և նրա ղեկավարութեամբ չի գործում: Այդ գիտակցութեանը գյուղում վերջնականապես իշխող դարձնելու համար հարկավոր է ուժեղացնել թե գյուղացիական մասսայի կազմակերպումը և թե այն ողնութեանը, վոր գյուղն ստանում է Խորհրդային իշխանութիւնից: Իսկ այդ ողնութեան ուժեղացումը մեր գործարանային արդյունաբերութեան աճումով և սոցիալիզմի իրականացումով:

Գյուղն այն վերջին ապաստանն է, վորտեղ կապիտալը կարող է կուտակվել և մեր պետական արդյունաբերութեան, ուրեմն և խորհրդային կարգերի համար սպառնալից չափեր ընդունել: Աշխատավոր գյուղացուն տնտեսապես ու քաղաքականապես նվաճել՝ նշանակում է ապահովել սոցիալիզմի հաղթութիւնը և՛ գյուղում և՛ ամբողջ յերկրում: Նրան ձեռքից բաց թողնել և քանդել նրա ու բանվորի մեջ 1917 թվին կնքած դաշինքը՝ նշանակում է կործանել սոցիալիզմի գործը գյուղում և Խորհրդային իշխանութեան ուժեղացման ու սոցիալիստական արդյունաբերութեան աճման առաջ արգելքներ կանգնեցնել, վորոնց հաղթահարումը պրոլետարիատի համար անսահման դժվար կը լինի: Ահա ինչու Համ. Կ.Կ. 14-րդ համագումարն իր բանաձեռնում հայտարարում է, վոր «գաղապար-

դային կռիւի հիմնական ձեւերից մեկը ներկայումս տնտեսութեան կապիտալիստական և սոցիալիստական տարրերի մեջ մղվող կռիւն է՝ բուրժուազիայի և պրոլետարիատի մեջ մղվող կռիւն՝ գյուղացիութեան հիմնական մասսային տիրանալու համար»:

Թե իր թիւով յերկրի ընդհանուր բնակչութեան մեջ և թե իր արտադրանքի արժեքով գյուղացիութեանը մեղ մոտ տնտեսական ու քաղաքական անհամեմատ ավելի մեծ նշանակութիւն ունի, քան բուրժուազիան: Մասնավոր կապիտալը մեր արդյունաբերութեան մեջ այնքան աննշան դեր է կատարում, վոր պետական արդյունաբերութեան համար վորեւէ դժվարութիւններ ստեղծել չի կարող: Ճիշտ է, յերկրի ընդհանուր տնտեսական վերելքի սոցիալիզմում աճում է և՛ մասնավոր կապիտալը, սակայն իր աճման տեմպով պետական արդյունաբերութեանն այնքան և զիջում, վոր նրա տնտեսաբար կշիռը յերկրի ընդհանուր արդյունաբերութեան մեջ տարեց տարի ընկնում է: 3,5 տոկոսից 1923—24 թ. նրա տնտեսաբար կշիռն 1925—26 տնտեսական տարվա համար իջնում է մինչև 2,7 տոկոս:

Այստեղ հաշվի չի առնված տնայնագործական և արհեստավորական արդյունաբերութեանը, վորը մեր յերկրի արդյունաբերութեան մեջ շատ ավելի խոշոր դեր է կատարում, քան մասնավոր կապիտալը, այն է՝ 29,4 տոկոս 1923—24 թ. և 21,2 տոկոս 1925—26 թ.: ԽՍՀՄ սահմաններում 500 հազար արհեստավոր և 2,1 միլիոն տնայնագործ կա: Իր տնտեսական զարգացման ուղիների նկատմամբ բնակչութեան այս խավը եռույն սոցիալիզմում և՛ զանգում, ինչ և միջակ գյուղացիութեանը: Այդ պատճառով նրա նկատմամբ էլ Խորհրդային իշխանութիւնը մոտավորապես նույն քաղաքականութեանն է վարում, ինչ և միջակ գյուղացու նկատմամբ, այն է՝ ձգտում է նրա արտադրութեանը կոոպերացման յենթարկել և նրա մանր բուրժուական տնտեսութիւնը կոոպերացիայի միջոցով սոցիալիստական տնտեսութեան վերածել, յերկրի ընդհանուր սոցիալիստական արդյունաբերութեան մի մասը դարձնել: Ներկա խնդրի վրա ավելի յերկար կանգ չենք առնում, վորովհետեւ միջակ գյուղացու մասին վերեւ սրաշտպանած տեսակետը տնայնագործութեան նկատմամբ ամբողջապես իր ուժի մեջ է մտնում: Այստեղ կը հիշատակենք միայն, վոր առ 1 հունիսի 1925 թ. տնայնագործները և արհեստավորները 12,000 արտել ունեյին կազմակերպած, վորոնց 500 հազար տնտեսութիւն էր անդամակցում:

Մասնավոր կապիտալն անգոր ե կովկասյան պետական արդյունաբերության գեմ : Արտադրության պրոցեսից խուսափելով, մասնավոր կապիտալը գերազանցում է փոխանակության ասպարիզում գործել : Առաջիկա նրա խոչորագույն նվաճումներն այդտեղ են կատարված : 1924—25 տնտեսական տարում մասնավոր կապիտալն բնորոշվում էր ներքին առևտրի ընդհանուր արժեքի 24,9 տոկոսը, մեծաքանակ առևտրի 11 տոկոսը, և մանր առևտրի 44,3 տոկոսը : Հատկապես ինչ գյուղին և վերաբերում, առևտրի ասպարիզում մասնավոր կապիտալն այստեղ շատ ավելի ուժեղ է, քան պետությունը և կոոպերացիան՝ միասին վերցրած : Գյուղում սպառողական կոոպերացիան գեո շատ թույլ է, սակայն պետք է նկատի առնել, վոր այդ թուլությունը վոչ այնքան կոոպերացիայի կազմակերպչական ու կոլեկտիվ-կրթական աշխատանքի բացերով, ինչքան յերկրի ընդհանուր տնտեսական հետամնացությունը և պայմանավորվում : Սպառողական կոոպերացիայի ուժեղացումն առաջին հերթին նրանից է կախված, թե առաջիկա տարիներում ինչքան կաճի մեր արդյունաբերությունը, ինչքան կընդլայնվի յերկաթուղային ցանցը և ինչքան կը բարձրանա գյուղատնտեսությունը, ուրեմն՝ և գյուղացու գնողունակությունը :

VIII.

Մեր տնտեսության յերկու ճյուղերն են պետական-սոցիալիստական արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը : Միության ասպարան նրանց աճման տեմպից, նրանց համաչափ զարգացումից է կախված : Մասնավոր կապիտալը խորհրդային իշխանության համար այսօր վորեւե վտանգ չի ներկայացնում, սակայն նրա ուժեղացման հնարավորությունը ժխտել չենք կարող : Ինչպես վերևում նկատեցինք, գյուղատնտեսության և տնայնագործության ու արհեստավորական արդյունաբերության աճումը կարող է կապիտալի վերածննդի առատ աղբյուր հանդիսանալ, յեթե խորհրդային իշխանությունը չհաջողվի նրանց զարգացումը կոոպերատիվ արտադրության հունի մեջ գնել, տնտեսության այդ յերկու ճյուղերում—և ամենից առաջ գյուղատնտեսության մեջ—խոչոր արտադրություն ստեղծել և կոոպերացման ու մեքենայացման ճանապարհով կյանքի այդ բնագավառներում ել սոցիալիստական արտադրություն մտցնել : Գյուղատնտեսական արտադրության կոոպերացումը խորհրդային իշխանությունը հնարավորություն կըտա գյու-

ղի տնտեսության մեջ ել պլանաչափություն մտցնել և գյուղի ու քաղաքի տնտեսությունը համաչափ կազմակերպել, միացնել, մի ընդհանուր սոցիալիստական տնտեսություն ստեղծել :

Հողի և արտադրության ու փոխանակության միջոցների ազդեցնացումն այն խոչորագույն գեներն է, վորից ողտվելով, խորհրդային իշխանությունը կարողացավ յերկրի տնտեսությունը վերականգնել մի արագությամբ, վորի նմանը պատմությանը հայտնի չէ : Նախորդ ամեն մի տնտեսական տարվա հետ համեմատած, մեր արդյունաբերության աճումը հետևյալ պատկերն է տալիս .

1921—22 տնտ. տարում —50 տոկոս

1922—23 » » 45 »

1923—24 8 30 »

1924—25 » » 64 »

Բացառապես մեր յերկրում իշխող արտադրական հարաբերությունների շնորհիվ է, վոր տնտեսապես կործանված ու թշնամիներով չըմպատված յերկրում հաջողվեց այսքան արագ տեմպով տնտեսությունը վերականգնել և համապատասխան չափով բանվորի զոյությունը նյութական ու բարոյական պայմանները բարելավել : Ազդեցնացրած հողը, արդյունաբերությունը, յերկաթուղին, նավատորմը, ֆինանսները, արտաքին առևտուրը մի կողմից և մեր տնտեսական զարգացման համար փառավոր փորձը մյուս կողմից՝ կրկնակի յերաշխիք են այն բանի, վոր առաջիկա տարիներում ել տնտեսապես անընդհատ աճելու յենք :

Վոչ պակաս մեծ են գյուղատնտեսության աճման յերաշխիքները : Հոկտեմբերյան հեղափոխությունը գյուղացուն ձրխաբար տվեց այն հողը, վորը հակառակ պարագայում՝ պրոյետարիատն հեղափոխության բացակայության դեպքում՝ նա պետք է գներ կալվածատերերից, վանքերից, մեծ իշխաններից ու պետությունից, ինչպես գնում էր 1861—1917 թ. թ. ընթացքում : 1906 թ. գներով հաշված հողի կոնֆիսկացիան գյուղացիությանը տվեց վոչ պակաս, քան 6—7 միլիարդ ուրբի : Անկախ դրանից, նույն կոնֆիսկացիայի շնորհիվ գյուղացիության ձեռքում տարեկան մոտ 500 միլիոն ռուբլապատերազմյան ուրբի յե մնում : Այդ գումարը մինչև 1917 թ. կարվածատեր դասակարգի անաշխատ յեկամուտն էր, վորն այժմ գյուղացիությանն է անցնում : Գյուղատնտեսության աճմանը վոչ պակաս չափով նպաստում է հարկային լծի թեթևացումը : Արհամիությունների համ. Կ. Ս. ի վերջին պլենումում արած իր գեղուց-

ման մեջ ընկ. Զերժինսկին, ոգտվելով ընկ. Պրեոբրաժենսկու տրված լինելից, հայտարարեց, վոր Ս.Ս.Հ. Միության սահմաններում գյուղացիության վրա ընկնող բոլոր տեսակի հարկերի գումարը 1924-25 թ. 800 միլիոն նախապատերազմյան կամ 1,400 միլիոն չեղվոն ուղարկվ պակաս և, քան նույն գումարը նախապատերազմյան տարիներում (տես „Правда“-ի և Մոսկվայի այլ թերթերի փետրվարի 12-ի № №-ը) :

Հողը դնելու ծախսից, կապալավճարից և կալվածատիրության հանդեպ ունեցած այլ պարտականություններից, ինչպես և հարկային բեռի մի խոշոր տոկոսից ազատվելով, խորհրդային իշխանության պայմաններում և նրա աջակցութեամբ գյուղացին իր տնտեսությունն այնքան արագ կերպով կը բարձրացնի, վոր խորհրդային իշխանության համար գլխավոր դժվարությունը վոչ թե մեր գյուղատնտեսության բարձրացումն և լինելու, այլ նրա արտադրանքի ռեալիզացիան և գյուղացու արտադրական ու սպառողական պահանջների բավարարումը դործարանային արդյունաբերության արտադրանքով : Այստեղ էլ խնդրի լուծումը մեր արդյունաբերության աճումն և տալու :

Արդյունաբերության և գյուղատնտեսության աճումն առաջիկա տարիներում կասկածից դուրս, լիովին ապահովված և : խորհրդային իշխանության առաջ դրված հիմնական խնդիրն է՝ վոչ թե մեր տնտեսությունը բարձրացնել և յերկիրը փաղցից վերկել, ինչպես այդ 1920-21 թ. թ. տեղի ունեց, այլ արդյունաբերության և գյուղատնտեսության արագ աճման պայմաններում նրանց դարացման մեջ անհրաժեշտ համաչափություն մտցնել և դործարանային արդյունաբերության ուժեղացման միջոցով աշխատավոր գյուղացիությանը հնարավորություն տալ իր արտադրությունը յիստական հիմունքներով վարել, իր տնտեսությունը կոոպերացման ու մեքենայացման յենթարկել և վերջինս պետական-սոցիալիստական արդյունաբերությանը միացնելով, բանվոր դասակարգի հետ ձեռք-ձեռքի տված, մեր ամբողջ տնտեսությունը և մեր ամբողջ հասարակական կյանքը սոցիալիստական դարձնել :

Սոցիալիզմ մեզ մոտ կա արդեն, և նրա հիմքը մեր պետական արդյունաբերությունն է : Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ծիծաղելի յե փնտրել սոցիալիզմը, քանի վոր նրա հիմնական նվաճումները սոցիալիստական նվաճումներ են : խնդիրը վոչ թե այն

և, թե մեզ մոտ սոցիալիզմ կա՞, թե վոչ, այլ այն, վոր յեղածը պահպանենք, մեր տնտեսության սոցիալիստական տարրերն ընդարձակենք և բանվորի ու գյուղացու միացյալ ուժերով, նրանց համերաշխ աշխատանքով, պրոլետարական դիկտատուրայից այնպես ոգտվենք, վոր սոցիալիզմը տարածվի նաև գյուղի վրա, և Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումները սոցիալիզմի գործին ծառայեն, մեր կյանքի բոլոր բնագավառներում սոցիալիստական կարգեր մտցրվեն :

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՅԱՆ ՎՐԱՅՈՎ ԳԵՊԻ ՍՈՑԻԱԼԻԶՄ*)

Ա.

Մեր ապրած ժամանակը կապիտալիզմից դեպի սոցիալիզմ տա-
նող դարաշրջան է, իսկ ՍՈՂ Միության սահմաններում—սոցիա-
լիստական ակտիվ շինարարության դարաշրջան։ Հասկանալի չէ
ինքն ըստ ինքյան, վոր Խորհրդային իշխանության տնտեսական սո-
ցիալ քաղաքականության առանցքն ու վերջնական նպատակն էլ
միայն տնտեսության սոցիալիստական կազմակերպումը կարող է
հանգիստնալ։ Իսկ վերջինիս հաջողությունը յենթադրում է ժա-
մանակակից տեխնիկայի և ժամանակակից բնական ու մաթեմատի-
կական գիտությունների յիսկատար ոգտագործում տնտեսության
բոլոր ճյուղերում։

Արտադրության միջոցների մասնավոր սեփականության ին-
ստիտուտը կործանող և նոր արտադրական հարաբերությունների
ձգտող պրոլետարիատը հանուն ձեականության չէ, վոր մղում է
իր դասակարգային ազատագրական կռիվը։ Սեփականության սո-
ցիալիստական ձևը պրոլետարիատի ձեռքում մի միջոց է, վորը
նրան հնարավորություն է տալու՝ մաքսիմալ չափերով ոգտագոր-
ծել ժամանակակից տեխնիկան ու գիտությունը, աշխատանքի ա-
րտադրողականությունը մաքսիմալ բարձրության հասցնել, ժողո-
ւրդական յայն մասսաների սոցիալական պահանջները բավարա-
րելու համար հնարավորապես մեծ քանակությամբ բարիքներ ա-
րտադրել։ Բանվորությունն ու աշխատավոր գյուղացիությունն ի-
րենց մասնավոր չեն կարող սոցիալիզմի կոմունիզմի ու նրա ն-
րա մարտիկներ լինել, յեթե համոզված չեն, վոր սոցիա-
լիստական կարգերում չափավոր չէ արտադրվելու, քան ժամանա-
կակից բուրժուական հասարակության մեջ։ Վերջինիս ստեղծած

հարստությունների բաժանումը պրոլետարական սոցիալիզմի հե-
վոյ մի առնչությունն է։ Հարստության բաժանումը բոսյակա-
յին ու քրիստոնեական սոցիալիզմի նպատակն է կազմում։ Ինչ վե-
րաբերում է պրոլետարիատին, նա ձգտում է վերացնել արտա-
դրության կապիտալիստական յեղանակը և վերջինիս հատուկ հա-
կասությունները, ձգտում է վերացնել ժամանակակից արտադրո-
ղական ուժերի յիսկատար ոգտագործման առաջ կանգնած խոչըն-
դոտները և մեր ամբողջ տնտեսական կյանքը կազմակերպել վոչ
միայն ռացիոնալ հիմունքներով՝ համապատասխան ներկայիս տեխ-
նիկայի ու գիտության պահանջներին, այլ և ամենալայն չափերով,
յերբեք չտեսնված յայն չափերով։

Գործարանային արդյունաբերության և յեռնագործության ա-
ղաբեզում մեր սոցիալիստական ձգտումների իրականացման նա-
խապայմանը խոչոր արտադրությունն է։ Ս. Խ. Հ. Միության սահ-
մաններում վերջինս համարյա ամբողջովին Խորհրդային իշխա-
նության սեփականություն է կազմում, իսկ նրա ռացիոնալ կազ-
մակերպումը, նրա զարգացումն ու բարդավաճումը Խորհրդա-
յին իշխանության աշխատանքի կենտրոնը, նրա ամենաառաջնա-
կարգ հոգսերից մեկը։ Սակայն, մեր միության բնակչության 80—
82 տոկոսը գյուղատնտեսությունում է պարապում և նրա տնտեսու-
թյունն ամբողջովին մանր արտադրություն է, մի հանգամանք,
վոր գյուղատնտեսությունը բարձրացնելու և ռացիոնալ հի-
մունքների վրա դնելու, բնական ուժերն ու հարստությունները
յիսովին մշակելու, նրանցից մաքսիմալ չափերով ոգտվելու գործը
վոչ միայն զգալիապես, այլ և անհնարին է դարձնում։ Մանր սե-
փականատերերն այսոր զուրկ են և մինչև խոչոր արտադրության
անցնելը միշտ էլ զուրկ կլինեն այն տեխնիկական միջոցներից ու գի-
տությունը ձեռք բերելու հնարավորությունից, վորոնք ռացիոնալ
գյուղատնտեսության անհրաժեշտ նախապայմանն են կազմում։
Մեր գյուղացու արտադրության տակ յեղած անդրձրհեղեղյան
գործիքները նրա տնտեսության միջնադարյան ձևերը, նրա աշխա-
տանքի չնչին արդյունքը և նրա դարավոր կիսաքաղց գրությունը
վոչ այնքան նրա աղիտության, ինչքան նրա մանր արտադրության
հետևանք են հանդիսանում։

«Հողային մանր սեփականությունը բարբարոսների մի դասա-
կարգ և ստեղծում, ասում է Կ. Մարքսը, վորը կիսով չափ հաս-
րակությունից դուրս է կանգնած և հասարակության նախնական

*) Արտատպված «Հայաստանի Գյուղատնտ. Կոոպերացիա»
ամսագրից։

բիւրս ու կոպիտ ձեւերին միացնում է իր մեջ քաղաքակիրթ յերկր-
կրներին հատուկ բոլոր տանջանքներն ու ամբողջ թշվառութիւնը»
(«Կապիտալ» հ. 3-րդ գլ. 47): Իր մի այլ աշխատութեան մեջ
(«Լյուի Բոնապարտի 18-ն Բրիտանիայի») Ֆրանսիայի մանր գյու-
ղացիութեան ու նրա տնտեսութեան մասին Մարքսը հետեւյալն է ա-
սում. «Մանր սեփականատեր՝ թղուկային գյուղացիները մի ահա-
գին մասսա յեն կազմում, վորի անդամները հալածար պայման-
ներում են ապրում, սակայն միմիանց հետ հաստատուն ու
բարդ հարաբերութիւններին մեջ չեն մտնում: Նրանց արտադրու-
թեան յեղանակը նրանց մեջ վոչ միայն փոխադարձ կապեր չի
ոտելում, այլ նրանց ուղղակի միմիանցից բաժանում է... Նրանց
արտադրութեան ասպարեղ հանդիսացող մանր հողամասը իր մը-
շակման համար վոչ աշխատանքի բաժանում է վոչ գիտութեան
գործադրում է պահանջում, հետեւեալն չի պահանջում նաև բազ-
մակողմանի զարգացում, տաղանդների պեսպիսութիւն, հասարա-
կական հարաբերութիւնների բարդութիւն: Գյուղացիական ա-
մեն մի առածին ընտանիք... արտադրում է իր ապրուստը, ավելի
բնութեան հետ փոխանակութեան մեջ մտնելով, քան հասարակու-
թեան հետ հարաբերութիւններ հաստատելով... Մանր հողամա-
սը, վորը վորպես թէ գյուղացուն է պատկանում, նրա ամբողջ
վաստակը, շահը և ունեան կապիտալիստի ձեռքն է հանձնում,
գյուղացուն մի այնքան չնչին մաս հանելով, վորը հազիվ նրա աշ-
խատութեամբ կազմի»:

Կապիտալի իշխանութիւնից մեր գյուղացին արդեն ազատա-
զրկւած է, այնպես վոր «իր ամբողջ վաստակը, շահն ու ունեան»
այլևս կապիտալիստին չի հանձնում: Սակայն, նա դեռ յենթակա
չահագործման գյուղի ունեւոր տարրերին՝ գյուղական բուռնց-
ներին, ինչպես և քաղաքի առևտրականի կողմից: Յեթե վերջին-
ներին դեմ նա անցոր եր կովել դեռ պատերազմից առաջ, իր գո-
յութեան ու աշխատանքի խաղաղ պայմաններում, այժմ այդ առ-
պարիզում նա վոչ պակաս անցոր է, ինչքան վոր միայն իր սեփա-
կան ուժի վրա յեն հենվում: Պատերազմն ու քաղաքացիական
կռիվը նրան տնտեսապես կործանեցին, չահագործմանը դիմադր-
ելու ընդունակութիւնից ել ավելի զրկեցին: Միայն կաղմա-
կերպով, իր ուժերը միացրած, միացյալ աշխատանքային ֆրոնտ
կազմած գյուղացիութիւնն է, վոր գյուղի ու քաղաքի բուր-
ժուազիայի դեմ կարող է հաջողութեամբ կովել: Իսկ կովի հաջո-

թեան նախապայմանը և նրա խոշորագույն գործիքը աշխատավոր
գյուղացիութեան տնտեսական ուժեղացումն է, նրա տնտեսութեան
վերականգնումը, նրա արտադրողական ուժերի զարգացումն էն:

Գյուղացու արամադրութեան տակ յեղած մանր հողամասը,
նրա տեխնիքական ու կուլտուրական հետամնացութիւնն արդեւ
են հանդիսանում թէ այդ կովի հաջողութեանը, և թէ նրա տըն-
տեսութեան վերականգնմանը, և ամեն մի գյուղացու հրամայողա-
բար թելադրում են՝ հարեանների հետ միանալ և միացյալ ուժերով
թէ իրենց տնտեսութիւնն ամուր, ռացիոնալ հիմքերի վրա դնել,
և թէ բուռնցների շահագործումից ազատագրվել:

Տնտեսութեան վերականգնման ու զորացման, ինչպես և շա-
հագործման վերացման համար աշխատավոր գյուղացու առաջ
միայն մի ծանապարհ է բացվում—դա միացյալ, կոլլեկտիվ, կո-
ոպերատիվ աշխատանքի ու տնտեսութեան փոխադարձն է: Կռիվը
հեղափոխութեան և հակահեղափոխութեան մեջ դեռ չի վերջացել.
նա միայն իր զարգացման ու առաջնադարձման մի նոր, ավելի
բարձր շրջանն է մտել: Նոր տնտեսական քաղաքականութեան պայ-
մաններում գյուղական բուրժուազիան նորից գլուխ է բարձրա-
ցնում և նրանից սպասվող վտանգի հանդեպ գյուղի ամեն մի բան-
վոր, ամեն մի աշխատավոր գյուղացի պետք է պարզ գիտակցեն,
վոր հեղափոխութեան պրոցեսում ձեռք բերած հողը և քաղաքա-
կան իրավունքները պաշտպանելու միակ միջոցը նրանց տնտեսա-
կան ուժեղացումն է, վորը միայն ուժերի միացումով է հնարավոր:
Ինչպես յերեսուն տարի առաջ Ֆր. Ենգելսն էր ասում, «մանր
գյուղացիների հանդեպ մեր առաջ կանգնած խնդիրն ամենից առաջ
նրանում է կայանում, վորպեսզի նրանց մասնավոր արտադրու-
թեանը և մասնավոր սեփականութիւնն ընկերական դարձնենք,
ոակայն վոչ բունի միջոցով, այլ որինակով և այդ նպատակին ծա-
ռայող հասարակական ոգնութեան միջոցով... Ներկա դեպքում
դիմադրող հարցն այն է, վոր պարզենք գյուղացուն, թէ նրա տունն
ու հողային սեփականութիւնը մենք կարող ենք փրկել ու պահպա-
նել, նրանց ընկերական սեփականութեան և ընկերական արտադրու-
թեան վերածելով: Անհատական սեփականութեամբ պայմանավոր-
վող անհատական տնտեսութիւնն է, վոր գյուղացուն դեպի կոր-
ծանում է տանում: Յեթե նա չարունակի պնդել իր անհատական
տնտեսութեան պահպանման վրա, անխուսափելիորեն կկորցնի և
հողը և տունը, վորովհետեւ խոշոր կապիտալիստական տնտեսու-

թյունը կը վերացնի նրա արտադրութեան հնացած յեղանակը: Այդ և այսոր իրերի գրութիւնը: Յե՛վ այդ պայմաններում մենք հանդես ենք գալիս և գյուղացիների համար հնարավորութիւն ստեղծում՝ արտադրութիւնը կազմակերպել սեփական ուժերով և ընդհանուր ժիշոցներով: Գյուղացիներին միթե՞ չի կարելի հասկացնել, վար այդ և պահանջում իրենց շահը, վոր այդ և նրանց փրկութեան միակ ժիշոցը («Крестьянский вопрос во Франции и Германии»): Մի քիչ հետո Պր. Ենգելսը հայտարարում է, վոր «խոշոր կապիտալիստական արտադրութիւնը նույն հեշտութեամբ կը փշրի գյուղացու հնացած մանր անտեսութիւնը, ինչ հեշտութեամբ յերկաթուղային գնացքը կը փշրէր նրա սայլակը»:

Նկատի առնելով, վոր մարքսիզմի հոտը շատած կամ մարքսիզմի կողքով անցած ու մարքսիզմը չմարսաց չատ մեշշաններ՝ գինձած, իհարկէ, մարքսիստական ցիտատներով՝ գեո շարունակում են իրենց պառավական բամբասանքներն այն մասին, վորպէս թէ կոմունիստական կուսակցութեան գյուղացիական քաղաքականութիւնը մարքսիզմի սկզբունքներին հակասում է, ավելորդ չենք համարում Ենգելսի նույն աշխատութիւնից առաջ բերել և հետեյալ քաղվածքը. «Մենք այդպէս ենք վարվելու վոչ միայն այն պատճառով, վոր ինքնութիւնը կերպով աշխատող մանր գյուղացու մեր կողմն անցնելը հնարավոր ենք համարում, այլ և կուսակցութեան անմիջական շահերը նկատի առնելով: Ինչքան ավելի կաճի այն գյուղացիների թիւը, վորոնց մենք սրբոյետարիզացիայից կփրկենք և վորոնց՝ գեո վորպէս գյուղացիների՝ մեր կողմը կը գրավենք, այնքան հասարակական հեղաշրջումն ավելի արագ ու ավելի հեշտ կը կատարվի: Մեր շահերի տեսակետից անոգուս կլինեն այդ հեղաշրջմանն սպասել մինչ այն ժամանակ, յերբ կապիտալիստական արտադրութիւնն ամենուրեք իր զարգացման գագաթնակետին կը հասնի, յերբ վերջին մանր գյուղացին խոշոր արտադրութեանը զոհ կը գնա»:

Ենգելսի այս առաջարկը Պրանսիայի և Գերմանիայի չայսինքն՝ բուրժուական, կապիտալիստական յերկրների մանր գյուղացիութեանն և վերաբերում: Պրոլետարիատի դիկտատուրայի շրջանում մեր մեծ ուսուցչի այդ ծրագիրը իր արժեքը վոչ միայն չի կորցնում, այլ ընդհակառակը՝ առաջին անգամ պատմութեան մեջ իր լիակատար կիրառման քաղաքական ու տնտեսական հնարավորութիւնն և ստանում:

Բ.

Յեթե գյուղատնտեսական կոոպերացիայի լայն տարածումն ու զարգացումը բուրժուական յերկրներում ամենամեծ արգելքների յեն հանդիպում և հաճախ համարյա անհնարին են դառնում, անհնարին վոչ միայն քաղաքականապէս, այլ և տնտեսապէս մեղ մոտ նրա կազմակերպումը կյանքի ու մահվան հարց է, մի խոշոր պատմական անհրաժեշտութիւն, հեղափոխութեան վերջնական հաղթանակի ամենակարեւոր նախապայմաններից մեկը: Բուրժուական ամեն մի յերկրում մանր գյուղացին կուլ և գնում խոշոր կապիտալին կամ խոշոր հողատիրութեանն և ստրկանում: Կապիտալի առաջխաղացման ամեն մի քայլը միլլիոնավոր գյուղացիների տնտեսական քայքայման, իսկ հաճախ և նրանց ֆիզիքական կործանման գնով և ձեռք բերվում: Այդ և ասում մեղ կապիտալի զարգացման պատմութիւնը վոչ միայն Անգլիայում, այլ և ժամանակակից Հնդկաստանում, վոչ միայն բոլոր կապիտալիստական յերկրներում, այլ և կապիտալի գենքով նվաճած բոլոր գաղութներում:

Պրոլետարիատի դիկտատուրայի շրջանում, խորհրդային իշխանութեան պայմաններում, կործանման այդ վտանգից ու նրա հետ կապված բոլոր տանջանքներից ու դժբախտութիւններից մեր գյուղացին ազատ է: Սակայն, շարունակել իր տնտեսութիւնը նախկին յեղանակներով ու նախկին շրջանակներում՝ նշանակում է մեր գյուղացու համար չուտազործել Հոկտեմբերյան հեղափոխութեան նվաճումներն ու խորհրդային իշխանութեան բարիքները, նշանակում է ձեռքբերել ծալած նստել և բնական հարստութիւններն ուղտազործելու, գյուղական կյանքի սահմանափակ շրջանակներից, բթացնող պայմաններից դուրս գալու, ժամանակակից ամբողջ կուլտուրայի բարիքներն իր սեփականութիւնը դարձնելու փոխարեն՝ բնական ու հասարակական ուժերին ստրկացած մնալ, քաղցի ու տգիտութեան ճիրաններում մշտնջենապէս տանջվել:

Հոկտեմբերյան հեղափոխութեան մեջ այնքան խոշոր մասնակցութիւն ցույց տված և միայն այդ հեղափոխութեան շնորհիվ հողը ձեռք բերած և բանվորութեան հետ միասին իշխանութեան գլուխ անցած աշխատավոր գյուղացիութիւնը չի կարող ձեռքից բաց թողնել կոոպերատիվ կապակերպութեան, կոոպե-

րատիվ շինարարութեան գործը, վորը նրա վերջնական ազատագրման միակ ճանապարհը, հիմնական նախապայմանը և ամենախոշոր զենքն է ներկայացնում: «Ավելի մեծ չափով, քան արտադրութեան վորէն ալ ձև, կոոպերատիվ խոշոր արտադրութեանն աշխատավոր գյուղացիութեանը հնարավորութեանն է տալիս իր աշխատանքի հավիտենական տանջանքից ազատազրկելու և դրա հետ միաժամանակ աշխատանքի արտադրողականութեանը բարձրացնելու» գրում է Կ. Կառուտսկին*): Արդեն մի դար է, վոր զանազան ուղղութեաններէ պատկանող սոցիալիստական ծրագրներում գյուղատնտեսական կոոպերատիվ արտադրութեան կադմակերպումը մշտական կետերից մէկն է կազմում: Արտադրութեան այդ ձևը խորապէս սոցիալիզմի էությունից է բղխում, այն ինչ, մասնավոր մանր արտադրութեանը սոցիալիզմին կատարելապէս հակասում է:

Մանր, աշխատավոր գյուղացու ձևերը կոոպերացիան մի այնքան ուժեղ զենք է տալիս, ինչպիսին է խոշոր արտադրութեան կադմակերպումը և դրա հետ միասին ժամանակակից տեխնիկայի ու դիտութեան գործադրումը գյուղատնտեսութեան մեջ: Միայն կոոպերացիայի միջոցով է, վոր մանր հողատիրութեանն ու մանր հողագործութեանն ընդունակ են դառնում փոխարինել կապիտալիզմը, լիովին ոգտագործել վերջինիս հատուկ բարձր արտադրողական ուժերը և նրանց ել ավելի առաջ տանել, դարգացնել: Ավելացրեք դրան և այն անսահման կարեւոր, այն հիմնական հանգամանքը, վոր գյուղի աշխատավոր բնակչութեանը միայն կոոպերացիայի զենքով կարող է գյուղական բոունքների զեմ հաջող կռիւ մղել, միայն կոոպերացիայի զենքով շահագործումն իսպառ վերացնել և գյուղում էլ սոցիալիստական կարգեր հաստատել, վերացնելով դրա հետ միաժամանակ այն խոր անդունդը, վոր այսօր գոյութեան ունի գյուղի ու քաղաքի մեջ՝ նրանց տնտեսական, քաղաքական ու կուլտուրական կյանքում:

Գյուղատնտեսական կոոպերացիայի անհրաժեշտութեան, նրա անսահման մեծ նշանակութեան վրա վոչ վոր այնքան չի պնդել,

ինչքան Վ. Ի. Լենինը, վորը արտադրութեան այդ ձևը գյուղացու միակ փրկութեանն էր հայտարարում, նկատի առնելով վոչ միայն մեր յերկրի մանր հողատիրութեանը, այլ և մեր ամբողջ գյուղատնտեսութեան հետամնացութեանն ու նրա կործանումը պատերազմի ընթացքում: Պատերազմը գյուղատնտեսութեանն այնքան ծանր վերքեր է հասցրել, ասում էր ընկ. Լենինը, վոր նրա վերականգնումը արտադրութեան հին յեղանակներով կատարելապէս անհնարին պետք է համարել: Արտադրութեան ներկա ձևը և մանր հողատիրութեանը միմիանց հետ անբաժնելի կերպով կապված են: Մեր գյուղատնտեսութեանից ստացվող արդյունքով գյուղացու ծանր, յերբեմն զոխային աշխատանքը ամենաչին չափով է վարձատրվում: «Ինքը կյանքն է, ասում էր ընկ. Լենինը, վոր աշխատավոր գյուղացիութեան առաջ համոռնն պահանջ է դնում՝ հողի հասարակական մշակման անցնել, վորպէս միակ միջոցի՝ բարձրացնելու պատերազմի ընթացքում քայքայված ու կործանված կուլտուրան, միակ միջոցի՝ դուրս գալու այն խավարից, վհատութեանից և ընկճվածութեանից, վորին դատապարտում էր կապիտալիզմը գյուղի ամբողջ բնակչութեանը»: Պատերազմի դաշտում միլլիոնավոր գյուղացիներ ծանոթացան ժամանակակից տեխնիկային և տեսան, թե բուրժուական հասարակութեանը ներկայիս տեխնիկայի հրաշալիքները ինչ կործանիչ նպատակների յե ծառայեցնում: Այդ միլլիոններին զօվար չէ համոզել նրանում, վոր նույն տեխնիկայում լիոններին զօվար չէ համոզել նրանց պետք է համոզել նրանում, վոր հետամնաց գյուղատնտեսութեանը բարձրացնելու համար «նրան պետք է նոր ուղիների վրա դնել» և վոչ թե հնազամար յեղանակներով վարել, պետք է մի արտադրութեան վերածել, «վորը գիտութեան և տեխնիկայի նվաճումների վրա հիմնած լինի»:

Հեղափոխութեան կատարող և հեղափոխութեան միջոցով իր դիկտատուրան հաստատող բանվոր դասակարգը կարող է միայն սոցիալիստական կարգեր հաստատել, սոցիալիզմի հաղթանակին ձգտել: Յեւ ինչքան վոր վերջինս անհնարին է միայն քաղաքում, այն էլ խորհրդային Միութեան նման մի գերազանցորեն գյուղացիական յերկրում, հենց ինքը, բանվոր դասակարգը շահագրգռողութեան յերկրում, հենց ինքը, բանվոր դասակարգը շահագրգռողութեանն էլ սոցիալիստական հիմքերի ված է, վոր գյուղատնտեսութեանն էլ սոցիալիստական հիմքերի վրա դրվի: Գյուղատնտեսութեանն ու քաղաքի արդյունաբերու-

*) «Սոցիալիզմ և գյուղատնտեսութեան» գրքուկից, դրած 1903 թ., յերբ Կ. Կառուտսկին սլովենաարիտի դասակարգային տեսակետի վրա յեր կանգնած և հողային հարցում մարքսիստական չարքերում ամենախոշոր հեղինակութեանն էր համարվում:

թյանը մի ամբողջութիւն, մի մարմին են կազմում: Սոցիալիստական տնտեսութիւնն ու սոցիալիստական կարգերը քաղաքում անհրաժեշտորեն պարտութեան են դատապարտված, յեթե մասնավոր սեփականութիւնը և անհատական տնտեսութիւնը գոյություն ունենալով չարունակեն: Այդ դեպքում, ինչպես ընկ. Լենինն եր ասում, Հոկտեմբերյան հեղափոխութիւնը թղթի վրա կմնար:

Հեղափոխութեան հենց սկզբից իր հողային ու գյուղատնտեսական քաղաքականութիւնը Ռուսաստանի պրոլետարիատը այդ ուղղութեամբ ել տանում եր: Արդեն 1918 թ. փետրվարին, հողի սոցիալիզացիային նվիրած ղեկրեսում, Խորհրդային իշխանութիւնը պաշտպանում եր կոլլեկտիվ տնտեսութեան անհրաժեշտութիւնը գյուղում: Տեղային ու կենտրոնական հողատիրներին ղեկրեսը պարտավորեցնում ե «սոցիալիստական տնտեսութեան անցնելու նպատակով, ի հաշիվ անհատական տնտեսութեան՝ հողագործութեան մեջ կոլլեկտիվ տնտեսութիւնը զարգացնել, վորպես ավելի շահավետ տնտեսութիւն աշխատանքի խնայողութեան և արդյունքի տեսակետից» (հոդ. 11): Նույն մարմինների վրա ղեկրեսը պարտականութիւն ե դնում գյուղում «պայմաններ ստեղծել, վորոնք յերկրի արտադրողական ուժերի աճմանը նըպաստեն, հատկապես ինչ վերաբերում ե հողի պտղաբերութեան բարձրացմանը, գյուղատնտեսական տեխնիկան զարգացնեն և վերջապես հողագործ բնակչութեան աշխատավոր մասսաների գյուղատնտեսական զիտելիքների մակարդակը բարձրացնեն»:

Մի տարի անց, 1919 թ. փետրվարին, Ռուսաստանի կենտգործկոմն ընդունում ե «սոցիալիստական հողաշինարարութեան» հռչակավոր ղեկրեսը, վորով Խորհրդային իշխանութեան հողային քաղաքականութիւնը վերջնականապես ձևակերպվում, հաստատվում ե: Արդեն ղեկրեսի վերնագիրը՝ «սոցիալիստական հողաշինարարութեան անցնելու միջոցների մասին» ցույց եր տալիս, թե պրոլետարական իշխանութեան հողային ու գյուղացիական քաղաքականութեան առանցքը և նրա վերջնական նպատակը ինչն ե կազմելու: Դեկրեսը իրենից մի վիթխարի ծրագիր ե ներկայացնում, վորի իրականացումը մեր Միութեան նման մանր գյուղատնտեսական յերկրում տասնյակ տարիների աշխատանք ե պահանջելու: Հատկապես մեզ զբաղեցնող հարցի վերաբերմամբ ե, վոր ղեկրեսը անսահման խոշոր պատմական նշանակութիւն

ե ստանում: Դեկրեսի կենտրոնական միտքը ձևակերպված ե նրա 3-րդ հոդվածում, վորը և ամբողջապես առաջ ենք բերում:

«Վորպեսզի մարդկանց ամեն մի շահագործում վերջնականապես վերացվի, գյուղատնտեսութիւնը սոցիալիստական հիմունքներով կազմակերպվի և գիտութեան ու տեխնիկայի բոլոր նվաճումները գործադրի, վորպեսզի աշխատավոր մասսաները սոցիալիզմի վողով կրթվեն և կապիտալի դեմ մղվող կռիվում պրոլետարիատն ու գյուղի չքավոր բնակչութիւնը միանան՝ հողի ոգտագործման անհատական ձևերից անհրաժեշտ ե նրա ոգտագործման ընկերական ձևերի անցնել: Խորհրդային խոշոր տնտեսութիւնները, կոմունաները, հողի ընկերական ոգտագործման այլ տեսակները այդ նպատակին հասնելու լավագույն միջոցներն են: Այդ պատճառով հողի անհատական ոգտագործման բոլոր տեսակները պետք ե ընդունել, վորպես անցողական և մնւնող տեսակներ»:

Հնարավորութիւն չունենալով կանգ առնել այստեղ ղեկրեսի այլ հոդվածների վրա, վորոնք խորհրդային տնտեսութիւններին, գյուղատնտեսական կոմունաներին և հողի հասարակական մշակմանն են վերաբերում, առաջ ենք բերում նրա 135 հոդվածը, վորի բովանդակութիւնը մեր հոդվածի նյութի հետ ամենամոտիկ առնչութիւն ունի: Այդ կետում ասված ե. «Հողժողկոմատի և նրա մարմինների վրա պարտականութիւն ե դրվում՝ գյուղատնտեսական արտադրական կոմունաներին, ընկերութիւններին և հասարակութիւններին, հողի հասարակական արտեղներին և այլ գյուղատնտեսական միութիւններին ամեն մի հնարավոր ոգութիւն ցույց տալ թե սերմացուի, գործիքների, տնային կենդանիների մատակարարումով և թե ագրոնոմիական ու կուլտուրատեխնիկական ոգնութեան ամեն մի ձևով»:

Տասնյակ տարիների ընթացքում սոցիալիստական միտքն ու հատկապես մարքսիստական գրականութիւնը մշակում եյին գյուղատնտեսական կոոպերացիայի հարցը, իսկ Հոկտեմբերյան հեղափոխութիւնը նրա կիրառման ամենալայն հնարավորութիւններ ստեղծեց և նրա կազմակերպումը Խորհրդային իշխանութեան ամենահիմնական խնդիրներից մեկը հայտարարեց: Պրոլետարիատի հեղափոխութեան այդ խոշորագույն նվաճումներից մեկի կիրառումն ե, վոր այսօր Խորհրդային իշխանութեան ամենաառաջնակարգ ու անհետաձգելի հոգսերից մեկն ե դարձել:

Բուրժուական աշխարհում գյուղի աշխատավոր տարրերը մեծ զեփարությամբ, բայց և այնպես, աստիճանաբար ձեռք են բերում այն գիտակցությունը, վոր գյուղատնտեսության ռացիոնալիզացիան խոշոր արտադրություն է յենթադրում, իսկ վերջինս միայն կոոպերացիայի միջոցով է հնարավոր: Սակայն, նրանց կոոպերատիվ ձգտումների իրականացումն կապիտալի իշխանության պայմաններում 90 տեղոսով անհնարին է: Միայն խորհրդային կարգերում և, վոր գյուղացու գոյություն հասարակական – քաղաքական պայմանները հոգուտ գյուղատնտեսության զարգացման, հոգուտ գյուղատնտեսական կոոպերացիայի տարածման և ուժեղացման են զատավորվում: Յեւ վոր գլխավորն է, Խորհրդային իշխանության պայմաններում արտադրական կոոպերացիան գյուղատնտեսության մեջ վոր միայն խոշոր արտադրություն է ստեղծում և ամեն մի գյուղացու խոշոր արտադրության բարիքները ոգտվելու, գիտություն ու տեխնիկայի նվաճումները գործադրելու հնարավորություն տալիս, այլ ավելի բարձր տիպի խոշոր արտադրություն է ստեղծում, քան այդ կապիտալիստական յերկրների խոշոր գյուղատնտեսությունը կարող է տալ: Հայտնի յե, վոր ինչքան կապիտալիզմը իր զարգացման ընթացքում ավելի յե առաջագիժում, այնքան զարգացող արտադրողական ուժերի և բուրժուական արտադրական հարաբերությունների մեջ գոյություն ունեցող հակասությունն ավելի ու ավելի սուր կերպարանք է ընդունում, այսինքն՝ իր տրամադրության տակ յեղած վիթխարի արտադրողական ուժերի լիակատար ոգտագործման հնարավորությունից բուրժուական այնքան ավելի յե զրկվում: Հայտնի յե նաև, վոր գյուղատնտեսության մեջ այդ հակասությունը շատ ավելի ուժեղ չափով է արտահայտվում, քան գործարանային արդյունաբերության մեջ: Յեթե մրցման պրոցեսում հաղթանակ տանելու համար Փարբիկանոր հարկադրված է արտադրության ամենակատարագործված ձևերին գիժել և իր արտադրության տեխնիկան անդադար զարգացնել, կապիտալիստ հոգատերը հաճախ բարձր վատակ է ստանում այն պարզ պատճառով, վոր հրաժարվում է կատարել ներկայիս գիտական ադրոնոմիայի պահանջները, հրաժարվում է ներկայիս տեխնիկայի ու գիտության տված բոլոր բարիքներն ոգտագործելուց:

Արտադրության միջոցների մասնավոր սեփականության վերացումը և մեր ամբողջ տնտեսության սոցիալիստական կազմակերպումը արտադրողական ուժերի զարգացմանը մեծ զարկ են տալու նույն իսկ գործարանային արդյունաբերության մեջ: Ինչ վերաբերում է գյուղատնտեսությանը, վերջինս միայն սոցիալիստական հասարակարգում է, վոր հնարավորություն է ստանում իսկապես գիտական հիմունքների վրա դրվելու, հնարավորություն է ստանում կապիտալիզմի դարաշրջանում առաջացած վարթամ գիտություններն ու տեխնիկան լիովին գործադրելու: Արդեն Մարքսը ուշադրություն էր հրավիրում այն հանգամանքի վրա, վոր 19-րդ դարում զարգացած քիմիան, Փրիլոլոգիան ու գեոլոգիան ավելի մեծ չափով հոգադործության, քան գործարանային արդյունաբերության անմիջական հիմունքներն են հանդիսանում: Հոգագործության աղաղայի մասին Մարքսը մի զարմանալի նախատեսում ունի, վոր մեր գրականության մեջ դեռ արժանի դնահատում չի ստացել: Գործարանային արդյունաբերության զարգացման մի վորոշ աստիճանի վրա, գրում է մեր մեծ ուսուցիչը, հոգագործության և գործարանային արդյունաբերության մեջ գոյություն ունեցող անչափակցությունը պետք է նրվաղի, «այսինքն, հոգագործության մեջ արտադրողականությունն համեմատաբար ավելի արագ պետք է աճի, քան գործարանային արդյունաբերության մեջ» („Теория прибавочной ценности“, т. II, г. I).

Գյուղատնտեսական կոոպերացիային սպասող մեծ աղաղան հիմնավորելու տեսակետից շատ կարևոր է պարզել և այն հարցը, թե հետամնաց գյուղատնտեսության մեջ ինչպես կարելի յե սոցիալիստական արտադրություն հաստատել, յերբ դրա համար անհրաժեշտ նյութական ու բարոյական նախապայմանները այդ գյուղատնտեսությունը դեռ դուրկ է, յերբ կապիտալիզմի շրջանում նրան չի հաջողվում ձեռք բերել սոցիալիստական արտադրության համար անհրաժեշտ տվյալները, ինչպես այդ դրդարանային արդյունաբերության մեջ գոյություն ունի, վոր սոցիալիզմի համար կատարելապես հասունացած է: Յերկրագնդի վրա դեռ կան իրենց մարքսիստ ու սոցիալիստ անվանող մեղաններ, վորոնք սոցիալիզմն անհնարին են համարում թե դյուղում, և թե բոլոր վոր կապիտալիստական յերկրներում, յեթևիով այն

տեսակետից, վոր յերկու դեպքում էլ պահանջվում և գյուղատնտեսականության մեջ նախ մեքենայական ու կապիտալիստական արտադրություն մտցնել, այսինքն՝ ամբողջ գյուղացիությունը պրոլետարիզացիայի յենթարկել և ապա միայն գյուղատնտեսական արտադրության սոցիալիզացիայի ձեռնարկել։ Մի ժամանակ, համաշխարհային պատերազմից առաջ, այդ տեսակետը մարքսիստական եյին հայտարարում բոլոր մանր-բուրժուական սոցիալիստական կուսակցությունները, վորպեսզի այդ ճանապարհով գյուղացիությունը սոցիալիզմից հեռու պահեն և նրան իրենց ձեռքից բաց չթողնեն, իսկ այսօր նրա ջերմ պաշտպանն և պարծել 2-րդ Խնտերնացիոնալը, վորի ղեկավարների համար մարքսիզմով քուղարկված այդ հետադիմական, բանվորության և գյուղացիության համար անսահման վնասակար ու հակահեղափոխական թեորիան մի չափազանց հարմար գործիք է, վորից ոգտվելով, նրանք արդարացնում են թե իրենց համաձայնողական քաղաքականությունը կապիտալիստական յերկրներում, և թե միջազգային բուրժուազիայի իմպերիալիստական և հատկապես նրա գաղութային քաղաքականությունը։ «Դեռ չեն հասունացել» հակահեղափոխական թեորիան նրանք գիտական ու մարքսիստական են հռչակում և իրենց կառավարություններին բարբարոս քաղաքականությունը գաղութներում Մարքսի հեղինակությունը են ծածկում։

Վերջնենք մեր Խորհրդային Միությունը կամ Հ. ԱՄ. Միացյալ Նահանգները։ Այդ յերկրներից ամեն մեկում կարելի չե դանել պատմությանը հայտնի տնտեսության համարյա բոլոր ձևերը և արտադրության բոլոր յեղանակները։ Սակայն, մոտ վերջերի ժամանակներէ զի դալիս պնդելու, մեր Միացյալ Նահանգները մոտ թե կապիտալիստական, ալ նախնադարյան միջնորդական, հողադործական կամ խաշնարածական մի յերկիր և։ Կանգնել ալ անհեթեթ տեսակետի վրա նշանակում և զրկել պատմությունը չրջանների բաժանելու ամեն մի հնարավորությունից, կորցնել պատմական ամեն մի հեռանկար և կյանքի ալիքներում խեղդվել, կյանքի հանդեպ կատարելապես պասսիվ դիրք բռնել, նրա վրա ներդործելու հնարավորությունից հրաժարվել։ Հայտնի չե, մեր Անդրկայի նման հին կապիտալիստական յերկրում միջնադարյան կյանքի ժառանգությունը դեռ վերջնականապես լիկվիդացիայի չի յանձնարկված։

Հարցը փոչ թե նրանում է, թե տվյալ յերկրում տնտեսության

ի՞նչ ձևեր և արտադրության ինչ յեղանակներ կան, այլ նրանում, թե տվյալ յերկրի ամբողջ տնտեսական—քաղաքական կյանքը արտադրության ի՞նչ յեղանակների յե յենթարկվում, ի՞նչով և պայմանավորվում և դրա հետ միասին ու վորպես դրա հետևանք՝ թե տվյալ յերկրում վո՞ր դասակարգն է իշխող հանդիսանում։ Կապիտալիստական ամեն մի յերկրի ամբողջ տնտեսությանը—հողագործություն, խաշնարածություն, արհեստներ, տնայնագործագործություն, ինչպես և արտադրության բոլոր յեղանակները—ուսական արտեղներից սկսած մինչև ամերիկական կոմունիստական համայնքները—ամեն ինչ առաջագիմում կամ հետադիմում է, դարգանում կամ քայքայվում, համապատասխան կապիտալի շահերին ու պահանջներին, համապատասխան այն ազդեցությանը, վոր թողնում և նրանց վրա կապիտալիստական խոշոր արտադրությանը, համապատասխան գործունեյության այն ասպարեղին ու շրջա-նակներին, վոր խոշոր կապիտալը նրանց է վերապահում։ Միացյալ Նահանգներում և Խորհրդային Միության մեջ կան վորսորդներ և թափառական կյանք վարող խաշնարածներ, սակայն նրանցից վոչ մեկը վորսորդական կամ խաշնարածական յերկիր չէ։ Միացյալ Նահանգներում իշխող են հանդիսանում կապիտալը և կապիտալիստը, մեզ մոտ—ազգայնացրած խոշոր արդյունաբերությունը և բանվոր դասակարգը։ Յեւ ինչպես Միացյալ Նահանգներում հողագործության, անասնապահության, արհեստների և նույնիսկ կոմունիստական համայնքների վիճակն ամբողջապես կապիտալի պայմանավորվում, ու կապիտալիստի քաղաքականությամբ է պայմանավորվում, աչնպես ևլ մեզ մոտ—պրոլետարիատի դիկտատուրայի և մեր պետական—սոցիալիստական արդյունաբերության աճման պայման-ներում—տնտեսության բոլոր ճյուղերի և արտադրության բոլոր յեղանակների զարգացումը կարող է այն ուղղությամբ միայն կա-տարվել, վորը սոցիալիզմի և բանվոր դասակարգի շահն և պահան-ջում։

Խորհրդային Միության մեջ բանվոր դասակարգն է իշխող հանդիսանում, և յերկիր տնտեսության առաջխաղացման գործը նա պետք է կազմակերպի, վոր այդ ասպարիզում կատարվող աշխատանքն է կապու մեղ զեպի սոցիալիզմը տանի։ Մեր հողագործու-
թյան մի քանի մեղ զեպի սոցիալիզմը տանի։ Մեր հողագործու-
թյան, անասնապահության, արհեստների և տնտեսության այլ
ճյուղերի առաջ զարգացման մի ճանապարհ է։ Բանվոր դասակարգի ան-
ձնապարհ—սոցիալիզմի ճանապարհն է։

միջական, նրա սեփական դասակարգային չափն է, վոր մեր ամբողջ տնտեսությունը—գյուղում և քաղաքում—սոցիալիստական ուժերի վրա դրվի և այդ կեսն նպատակին է, վոր նա ձգտում է իր տնտեսական ու կուլտուրական շինարարությունը ամբողջ գործում:

Առանց պրոլետարիատի և նրա իշխանությունն ոգնությունն գյուղի աշխատավոր մասնաների համար չափազանց դժվար կլինի գյուղատնտեսական կոոպերացիան ամուր, ուսցիոնալ հիմքերի վրա գնել և այն ամբողջ գյուղացիության սեփականությունը դարձնել: Մյուս կողմից, ինքը պրոլետարիատն էլ չի կարող սկսած և արդեն խոշոր պատմական հաղթանակներով պսակված հեղափոխությունը սոցիալիստական ուժերով հաջողություն մեր առաջ տանել, յեթե, ինչպես ընկեր Լենինն էր ասում, «գյուղերում գիտակից և ամուր կազմակերպված ոգնություն չգտնի»:

Գյուղի և քաղաքի աշխատավոր դասակարգերի սերտ կապի ու համերաշխ քաղաքական գործունեությունը հարցը ամենախորը գնացող տնտեսական արմատներ ունի: Իր սեփական չափը նկատի առնելով, կազմակերպված բանվորությունը գյուղացուն պետք է հնարավորություն տա՝ ժամանակակից տեխնիկան ու գիտությունը գյուղատնտեսության բոլոր ճյուղերում գործադրելու: Գյուղություն ունի արդեն և այդ ոգնության հիմնական յերաշխիքը՝ Խորհրդային իշխանությունը: Բանվորությունը և Խորհրդային իշխանությունը չեն կարող տարվել ու սնվել այն ծայրահեղ հետադիմական ու կործանիչ թեորիայով, վորպես թե գյուղատնտեսությունն իր միջից, իր սեփական ուժերով պետք է գյուղատնտեսական տեխնիկա կամ քիմիա զարգացնի, կամ վոր առհասարակ նա պետք է արդեն ուսցիոնալ հիմունքների վրա դրած լինի, վորպեսզի սոցիալիստական գյուղատնտեսությունը մասին խոսք բարձրացվի: Էավ կլինե՞ր ի հարկե և Խորհրդային իշխանության գործն անսահման կթեթեանար, յեթե ժամանակակից տեխնիկան ու գիտությունը մեր գյուղը մուտք գործած լինե՞լին: Այդ դեպքում Խորհրդային իշխանության աշխատանքը գյուղում կառավարնար վոչ պակաս, քան յերկու տասնյակ տարով: Բայց Խորհրդային իշխանությունը չի կարող պանաղան «յեթե»-ներով, յենթագրություններով ու բարի ցանկություններով սնվել, չի կարող գյուղացիությունը հանձնարարել, վորպեսզի նա սեփական ուժերով բարձր գյուղատնտեսական կուլտուրա ստեղծի, իսկ ինքը սպասի, մինչև վոր մի գեղեցիկ ուր գյուղացիությունը կներկայա-

նա քաղաքի պրոլետարիատին և կհայտարարի, վոր սոցիալիզմին անցնելու համար ինքն ել արդեն բավականաչափ աճել ու հասունացել է:

Ներկա դեպքում հարցին չի կարելի բուրժուական չափերով մոտենալ: Մեր յերկրի գործարանային արդյունաբերությունը մեջ իշխող և հանդիսանում արտադրության միջոցների վոչ թե մասնավոր, այլ պետական սեփականությունը, վորը Խորհրդային իշխանությունը հնարավորություն է տալիս աստիճանաբար ազատագրվել բուրժուական հասարակության խոշորագույն չարիքներից մեկից—արտադրության անարխիայից և իր հույսը առանձին տնտեսությունների ու առհասարակ արտադրողակն ուժերի ազատ խաղի վրա չդնել, այլ յերկրի ամբողջ տնտեսությունը պլանաչափ կազմակերպել, նրա դեկն ամբողջապես իր ձեռքում պահել: Իսկ յերկրի պլանաչափ կազմակերպած տնտեսական ընդհանուր օրգանիզմից չի կարելի դուրս ձգել գյուղատնտեսությունը, այն ել մեր Միությունն մի յերկրում, վորտեղ գյուղատնտեսությունը դեռ այնքան վճռողական դեր է կատարում:

Խորհրդային իշխանությունը առաջ դրված ամենակարևոր ու ամենահրատապ խնդիրներից մեկն է, այդ պատճառով, գյուղատնտեսությունը վերականգնումը, նրա ուսցիոնալիզացիան և նրա զարգացումը դեպի սոցիալիստական տնտեսություն: Խորհրդային իշխանությունը և Կոմունիստական Կուսակցությունը քաջ գիտակցում են ի հարկե, վոր մեր գյուղում անմիջապես սոցիալիստական կարգեր մտցնելն վոչ միայն դժվար, այլ ուղղակի անհնարին գործ է, վոր մեր գյուղատնտեսությունը դրա համար դեռ մի չարք նախատապրատական շրջաններ է ապրելու: Այդ ասպարիզում և այդ շրջանակներում և ահա, վոր գյուղատնտեսական կոոպերացիան հսկայական դեր ունի կատարելու: Մեր գյուղին, վորտեղ դեռ մանր արտադրությունն է իշխում, կոոպերացիան կտա խոշոր արտադրության բոլոր բարիքները, նրա բոլոր առավելությունները: Իսկ կոոպերատիվ հիմունքների վրա դրած խոշոր գյուղատնտեսական արտադրությունը կտա մեզ այն ամենը, ինչ պահանջվում է գյուղում սոցիալիստական արտադրություն և սոցիալիստական հասարակական կարգեր հաստատելու համար:

ՅԵ.

Կոմունիստական Կուսակցությունն իր ծրագրով ու իր ամբողջ գործունեությամբ, Խորհրդային իշխանությունն իր տա-

նյակ դեկրետներով ու իր ամբողջ գյուղատնտեսական քաղաքականությամբ, իրենց գոյության առաջին որից ձգտել են գյուղատնտեսության վերականգնմանն ու սոցիալիստական կարգերի հաստատմանը գյուղում կոոպերացիայի միջոցով: Այդ նպատակին հասնելու համար մեր ծրագիրը մի շարք միջոցներ է առաջարկում, հատկապես պնդելով այն պահանջի վրա, վոր «գյուղատնտեսության արդյունքների վերամշակությամբ զբաղվող գյուղատնտեսական կոոպերացիային պետությունն ամենայն աջակցություն ցույց տա»: Ինչպես վերը տեսանք, «Սոց. Հողաշինարարության» դեկրետն էլ Հողօգտագործատի ու նրա տեղային մարմինների վրա պարտականություն է դնում՝ գյուղատնտեսական ամեն տեսակի միություններին ամենայն աջակցություն ցույց տալ: Նույն դեկրետով, կազմակերպված ամեն մի գյուղատնտեսական կոմունա կամ այլ գյուղատնտեսական միություն ու բնակչություն պարտավորվում է շրջակա գյուղացիությանն ոգնություն հասնել, բարձրացնելով նրա տնտեսությունը, նրա շարքերում կուլտ-կրթական աշխատանք վարելով և աջակցելով այն կովին, վորը գյուղի բուռնացների դեմ է մղվում: Կ. Կ. ծրագիրը դեռավելի հեռուն է դնում, գյուղատնտեսությունը բարձրացնելու նպատակով առաջարկած այլ միջոցների հետ պահանջելով, վոր «Կոմունիստական շինարարության դործում հողագործության մեջ արդյունարերական բանվորներն էլ պլանաչափ ու լայն մասնակցություն ունենան»: Այս ճանապարհով է միայն, վոր մեր ծրագիրը ձգտում է վերացնել գյուղի ու քաղաքի մեջ գոյություն ունեցող հակադրությունը, վորը «գյուղի տնտեսական ու կուլտուրական հետամնացության ամենախորհիմքերից մեկն է»:

Դեռ 1901 թ. հարցին նույն լուծումն էր տալիս Վ. Ի. Լենինը, պաշտպանելով Կ. Մարքսի և Կ. Կաուցկու դիրքը հողային հարցում բուրժուական ու աշակուղմյան-սոցիալիստական հարձակումների տարախից: «Մեծ քաղաքների առաջադիմական դերը կապիտալիստական հասարակության մեջ մենք վճռականապես ընդունում ենք, սակայն այդ հանգամանքը մեզ բոլորովին չի խանգարում՝ քաղաքի և գյուղի հակադրության վերացումն էլ մեր իդյալի մեջ մտցնել (մտցնել և մեր գործունեության ծրագրի մեջ, վորովհետև անիրականալի իդյալները մենք թողնում ենք պ. պ. Ստրուվեյին և Բերդյայիվին, ճիշտ չէ, վորպես թե դրանով մենք հրաժարվում ենք գիտության և գեղարվեստի դանձից: Ընդհակա-

ռակը, այդ անհրաժեշտ է, վորպեսզի հիշյալ գանձն ամբողջ ժողովրդին մատչելի դառնա, վորպեսզի վերացվի գյուղի միլիոնավոր բնակչության այն ոտարացումը կուլտուրայից, վոր Մարքսը այնքան ճիշտ կերպով «գյուղական կյանքի իդիոտիզմ» էր անվանում»:

Փաստ է, վոր մեր տնտեսության վերականգնմանը դուգընթացաբար խորհրդային գյուղում դասակարգային շերտավորումն ու ժեղացնում է և չունենոր գյուղացու շահագործումը բուռնացների կողմից աստիճանաբար աճում: Կոմունիստական կուսակցությունը և Խորհրդային իշխանությունը այդ յերևույթի վերացման համար ամեն մի հնարավոր միջոցի յեն ձեռնարկում և այդ միջոցների մեջ առաջին տեղը գյուղատնտեսական կոոպերացիային է պատկանում:

Խորհրդային իշխանության ոգնությունը գյուղին իր 90 տոկոսով վոչ թե սպառողական, այլ արտադրական նպատակների յե ծառայելու: Խորհրդային իշխանությունը իր որենսդրությամբ և իր տրամադրության տակ յեղած նյութական միջոցներով ամեն կերպ աջակցում է գյուղատնտեսության վերականգնման դործին և չունենոր գյուղացիության կովի հաջողությանը բուռնացների դեմ:

Ջրանցքներ, էլեկտրական կայաններ, մեքենաների տարածում ամենանպաստավոր պայմաններով, սերմացուի բաշխում՝ ահա ինչով է զբաղված Խորհրդային իշխանությունը: Այդատ գյուղացուն մնում է կազմակերպվել և կազմակերպված ուժերով՝ կոոպերատիվների ու արտերևների միջոցով՝ ոգտագործել Խորհրդային իշխանության այդ բարիքները: Իսկ մինչ այդ, էլեքտրական ուժից, ջրանցքներից ու մեքենաներից գլխավորապես գյուղի ունեվոր տարրերն են ոգավելու: Այն լայն շինարարական աշխատանքը, վոր հանուն գյուղատնտեսության վերականգնման, սկսել է Խորհրդային իշխանությունը, կարող է ընդարձակվել ու պահանջավոր հետեանքները տալ միայն այն ժամանակ, յերբ աշխատավոր գյուղացիությունն իր մասնաշուկ կոոպերատիվների, արտերևների, կոմունաների և այլ միությունների շուրջը կկազմակերպվի: Գիտություն և տեխնիքայի բարիքների ոգտագործումը մանր արտադրության մեջ անհնարին է կամ, հնարավորության դեպքում, շատ ավելի պակաս արդյունք է տալիս, քան խոշոր արտադրության մեջ, մասնավանդ ինչ վերաբերում է գյուղատնտեսական մթերքների վերամշակմանը:

արտադրութեան նյութական միջոցների վորոչ զարգացում, վորոչ նյութական հիմք ե պահանջվում)»:

Այդպիսով, կոոպերացիայի կազմակերպման ու նրա մասսայական տարածման գործը տասնյակ թեկերով կապվում ե վոչ միայն գյուղի ու քաղաքի ապրած տնտեսական պայմանների, այլ ե այն ամբողջ քաղաքական ու կուլտուրական աշխատանքի հետ, վոր մեր հեղափոխական կազմակերպութեանները տանում են գյուղում: Բանվոր դասակարգի դերը գյուղատնտեսական կոոպերացիայի մասսայականացման գործում, ինչպես ե նրա դաշինքի ամրացման անհրաժեշտութեանը աշխատավոր գյուղացիութեան հետ դեռ ավելի յեն աճում: Ահա ինչու պետական արդյունաբերութեան տնտեսական կապը գյուղատնտեսութեան հետ, բանվորի ե գյուղացու միացումը, 13-րդ համագումարի հիշյալ վորոչման ձևավակերպումով, «մի ամբողջ պատմական շրջանի հիմնական խնդիրն» ե կազմում: Համագումարը պահանջում ե այդ կապը դեռ ավելի ուժեղացնել ու ամրապնդել: Գյուղատնտեսական կոոպերացիայի կազմակերպումը վոչ միայն կոոպերատիվ մարմինների, այլ ե բոլոր կուսակցական, խորհրդային, յերիտմիութենական ե արհեստակցական կազմակերպութեանների ընդհանուր խնդիրն ե գառնում: Միութեանների մեջ հատկապես խոշոր դեր ունեն կատարելու հոգանառի ե լուսաշխի միութեանները: Կոոպերացիան, բացի իր տնտեսական բարձր արժեքից, քաղաքական ու կուլտուրական խոշոր նշանակութեան ե ցոյցում: Ահա ինչու ամեն մի կոոպերատիվ կազմակերպութեան, ամեն մի կոոպերատոր իրենց գործունեութեան ամեն մի քայլափոխում պետք ե կապված լինեն վոչ միայն խորհրդային, այլ ե կուսակցական ու արհեստակցական մարմինների հետ: Գյուղատնտեսական կոոպերացիայի, ինչպես ե կոոպերացիայի այլ տեսակների բարգավաճումն ու մասսայականացումը հնարավոր են միայն մեր բոլոր հեղափոխական մարմինների ոգնութեամբ ե քաղաքի բանվորութեան ու նրա կուսակցութեան՝ կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեամբ: Վերջին պայմանը կոոպերացիային սպասող հաղթանակների ամենահիմնական գրավականն ե:

Առաջին անգամ պատմութեան մեջ գյուղի ե քաղաքի աշխատավոր մասսաները միանում են մտնողադործական, յինարարական աշխատանքի շուրջը: Նրանց միութեանը պետք ե մի յերկաթե ուղակի վերածել, վորի դեմ մեր ներքին ու արտաքին բոլոր թշնամիները կատարելապես անգործ դուրս գան:

ՀՀ Ազգային գրադարան



NL0756901

1926p.

II

24065

ԳԻՆԸ 25 ԿՈՊ.